
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ



© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2011



Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկ

Տարեկան հաշվետվություն

2010



Բովանդակություն

Ուղերձ	6
Կառավարում և հաշվետվողականություն	**9**
ԿԲ առաքելությունը և խնդիրները	**9**
ԿԲ կառավարումը	**10**
ԿԲ հաշվետվողականությունը	**14**
Ռազմավարական ուղղությունների ամփոփում	**16**
Դրամավարկային քաղաքականություն	**18**
Դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն	**22**
Միջազգային պահուստների կառավարում	**23**
Ֆինանսական կայունություն, կարգավորում և վերահսկողություն	**26**
Վճարահաշվարկային համակարգ	**34**
Կանխիկ դրամաշրջանառություն	**38**
Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար	**42**
Կառավարում և կազմակերպչական զարգացում	**47**
Կառավարման համակարգերի բարելավում	**47**
Անձնակազմի կառավարում	**47**
Միջազգային համագործակցություն	**51**
Հասարակայնության հետ կապեր	**53**
Ռիսկի կառավարում և աուդիտ	**56**
Ներքին հսկողություն	**56**
Ներքին աուդիտ	**57**
ՀՀ ԿԲ տարեկան ֆինանսական հաշվետվություն	**59**



ՈՒՂԵՐՁ

Սիրելի՛ ընթերցող

2010 թվականը լի էր մարտահրավերներով և փորձություններով, սակայն ակնառու էին նաև ձեռքբերումներն ու համակարգային բարեփոխումները:

Վերջին երկու-երեք տարիներին դրսևորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մարտահրավերները ստիպեցին վերանայել շատ երկրների կառավարությունների, կենտրոնական բանկերի և նույնիսկ առանձին խոշոր գիտնականների մոտեցումներն ու որոշումները, վերափոխել դրանցում սահմանված նպատակների առաջնահերթությունները: Հայաստանի տնտեսությունը նույնպես զերծ չմնաց ճգնաժամի բացասական հետևանքներից և քաղեց իր դասերը: Հստակեցվեցին տնտեսության ուժեղ և թույլ կողմերը, և մենք համոզվեցինք, որ առանց տնտեսությունում կառուցվածքային փոփոխությունների և արտադրողականության էական աճի հնարավոր չէ խուսափել արտաքին ցնցումների բացասական ազդեցություններից, ապահովել կայուն տնտեսական աճ և պահպանել ցածր գնաճային միջավայր:

Ճգնաժամի հետևանքները իրենց զգացնել տվեցին նաև 2010 թվականի մակրոտնտեսական քաղաքականության իրականացման ընթացքում: 2009 թվականին Կառավարության հետ համատեղ մշակված հակաճգնաժամային միջոցառումները հնարավորություն տվեցին առավելագույնս մեղմելու համաշխարհային ճգնաժամի բացասական ազդեցությունը: Այդուհանդերձ, տարեսկզբին Կենտրոնական բանկը կանգնեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի մեկ այլ հետևանքի՝ բարձր գնաճի զսպման խնդրի առջև, ինչը աշխարհում կանխատեսվում էր մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնող բազմաթիվ մասնագետների կողմից: Մեր երկրում գնաճային միջավայրը պայմանավորող հիմնական գործոններ էին միջազգային շուկաներում գների աճը և նախորդ տարում իրականացված՝ տնտեսության աճին նպաստող ընդլայնողական դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները:

Տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացման և ապադոլարայնացման համապատասխան միջոցառումների իրականացման շնորհիվ հաջողվեց տարվա առաջին կիսամյակում 12-ամսյա գնաճը իջեցնել նպատակային միջակայք, սակայն տարվա երկրորդ կեսին ի հայտ եկան նոր մարտահրավերներ՝ գերազանցապես պայմանավորված պարենային ապրանքների միջազգային գների շեշտակի աճով և գյուղատնտեսական արտադրանքի ծավալների զգալի նվազմամբ:

Չնայած գնաճը պայմանավորված էր կենտրոնական բանկից անկախ պատճառներով՝ առաջարկի շոկերով, այդուհանդերձ, մեր ջանքերը մշտապես ուղղված են եղել այդ ցնցումների հաղթահարմանը, և շուկայի այլ հատվածներ գնաճային ճնշումների ներթափանցման կանխարգելմանը:

Կենտրոնական բանկը, լինելով ֆինանսական համակարգի զարգացման համար պատասխանատու մարմին, շարունակել է ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանակի ընդլայնման, մատուցվող ծառայությունների հասանելիության և բազմազանության ապահովման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը:

Տարվա կարևոր նվաճումներից էր Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի մեկնարկը: Այն կարևոր նշանակություն ունի ինչպես Հայաստանում ապահովագրության մշակույթի ներդրման, այնպես էլ ֆինանսական համակարգի զարգացման տեսանկյունից:

Մեկ այլ կարևոր ձեռքբերում եմ համարում կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների փաթեթի ընդունումը: Արդեն 2011 թվականից Հայաստանում կներդրվի կամավոր, իսկ 2014 թվականից՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչը: Այս բարեփոխումները ունեն մեծ սոցիալական նշանակություն և ուղղված են բնակչության պատշաճ կենսամակարդակի պահպանմանը նաև կենսաթոշակի անցնելուց հետո:

Շարունակվել է սպառողների շահերի պաշտպանության և հասարակության տարբեր նպատակային խմբերի տնտեսագիտական և ֆինանսական կրթման լայնածավալ միջոցառումների իրականացումը:

Իրականացված քաղաքականությունը իր արձագանքն է գտել նաև ֆինանսական համակարգի զարգացումներում: Վերականգնվել է նախաճգնաժամային մթնոլորտը ֆինանսական շուկաներում, էապես բարելավվել է մրցակցային միջավայրը ֆինանսական համակարգում, արձանագրվել է վարկավորման տոկոսադրույքների կայուն նվազում, սակայն, համակարգի աճի առումով, անելիքներ դեռ շատ կան:

Ամփոփելով ցանկանում եմ նշել, որ չնայած 2011 թվականը նույնպես առանձնանալու է գնաճային ճնշումներով և մարտահրավերներով, այնուամենայնիվ Կենտրոնական բանկը միջոցներ է ձեռնարկելու գնաճը նպատակային միջակայք վերադարձնելու ուղղությամբ: Կշարունակենք ֆինանսական հատվածի, մասնավորապես՝ կենսաթոշակային և ապահովագրական ոլորտների, արժեթղթերի շուկայի և ոչ բանկ ֆինանսական ինստիտուտների համակարգային բարեփոխումները:

Կենտրոնական բանկի նախագահ ***ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ***


200
դրամ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը գների կայունության ապահովմանն ուղղված միջոցներ է ձեռնարկում, մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

ՀՀ կենտրոնական բանկը մշակում է երկրում ֆինանսական կայունության ապահովմանը նպատակաուղղված ծրագրեր:

ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

բ) գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու զարգացումը.

գ) Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը.

դ) հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը.

ե) արժեթղթերում ներդրողների շահերի պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.

Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը՝

ա) իրականացնում է դրամային շուկայում տոկոսադրույքների և դրամային իրացվելիության կառավարման գործառույթները.

բ) հանդիսանում է վերջին ատյանի վարկատու.

գ) իրականացնում է Կառավարության բանկային սպասարկումը, ինչպես նաև հանդիսանում է Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն.

դ) իրականացնում է բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների և ֆինանսական համակարգի այլ մասնակիցների լիցենզավորումը, դրանց գործունեության կարգավորումն ու վերահսկումը՝ որպես միասնական վերահսկողություն իրականացնող մարմին.

ե) կառավարում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները.

զ) իրականացնում է դրամավարկային և ֆինանսական համակարգի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը.

է) իրականացնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ եթե ՀՀ կենտրոնական բանկի մյուս խնդիրները հակասում են իր հիմնական խնդրին, ՀՀ կենտրոնական բանկը առաջնություն է տալիս հիմնական խնդրին և ղեկավարվում է դրա իրագործման անհրաժեշտությամբ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ ՀՀ կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդն է:

Խորհուրդը կազմված է ՀՀ կենտրոնական բանկի նախագահից, նրա տեղակալից, խորհրդի հինգ անդամներից: ՀՀ կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե:

ՀՀ կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձը **ՀՀ կենտրոնական բանկի նախագահն** է: Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է ՀՀ նախագահի առաջարկությամբ, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով և պատասխանատու է ՀՀ կենտրոնական բանկի խնդիրների իրագործման համար: ՀՀ կենտրոնական բանկի նախագահը համակարգում է ՀՀ կենտրոնական բանկի բնականոն աշխատանքը, ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, իրականացնում է օրենքով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է **ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալը**, իսկ տեղակալի բացակայության կամ նրա պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝ տարիքով ավագ անդամը: ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալին նշանակում է ՀՀ նախագահը՝ վեց տարի ժամկետով: ՀՀ կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղա-

կալը, ինչպես նաև խորհրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, կատարել այլ աշխատանք, բացառությամբ գիտական, մանկավարժական, ստեղծագործական աշխատանքի:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի մյուս հինգ անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ հինգ տարի ժամկետով: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող ՀՀ կենտրոնական բանկում այլ պաշտոն զբաղեցնել:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդ

Խորհրդի հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ՝ երեքշաբթի օրը՝ ըստ խորհրդի կողմից յուրաքանչյուր տարվա առաջին Խորհրդի նիստի ժամանակ տվյալ տարվա համար հաստատված Խորհրդի նիստերի գումարման ժամանակացույցի: Խորհրդի արտահերթ նիստ կարող է գումարվել նախագահի, նրա տեղակալի կամ խորհրդի երեք անդամի նախաձեռնությամբ: ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում է ՀՀ կենտրոնական բանկի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիրը, ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող բաց շուկայական գործառնությունների, տրամադրվող վարկերի և ներգրավվող ավանդների սահմանաքանակներն ու տոկոսադրույքները, ՀՀ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորում իրականացնելու կարգը և պայմանները, ընդունում է ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերը, օրենքով սահմանված կարգով տալիս է բանկային գործունեության և այլ լիցենզիաներ, ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչում դրանք, սահմանում բանկերի և այլ անձանց լիցենզավորման կարգը, հաստատում է բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվները և դրանց հաշվարկման կարգը, իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատում է նաև Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող պարբերականների հերթական թողարկումները, ինչպես նաև Կենտրոնական բանկի գործառնական, վարչական և կապիտալ ներդրումների նախահաշիվն ու տարեկան ֆինանսական հաշվետվությունը:



ՀՀ ԿԲ խորհուրդ
(ձախից աջ).

1-ին շարք՝
Ներսես Երիցյան
Արթուր Ջավադյան
Աշոտ Մկրտչյան

կանգնած են՝
Ամդրանիկ Նորեկյան
Սիարոն Չիլինգարյան
Վախթանգ Աբրահամյան
Արմենակ Դարբինյան

2010 թ. գումարվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 61 նիստ և ընդունվել է 358 որոշում, որոնք վերաբերում են ինչպես Կենտրոնական բանկի քաղաքականության և հիմնական գործունեության վերաբերյալ հայեցակարգային փաստաթղթերի, այնպես էլ օրենքների նախագծերի, ֆինանսական համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի քննարկմանն ու հաստատմանը: Կենտրոնական բանկի խորհրդի նիստերին մշտապես հրավիրվում են նաև քննարկվող հարցերի ոլորտը ներկայացնող համապատասխան մարմինների ներկայացուցիչներ, մասնավորապես՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքի քննարկումներին հրավիրվում է Կառավարության կամ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչը, իսկ ֆինանսական համակարգի քաղաքականությանը վերաբերող հարցերի քննարկմանը, ինչպես նաև դրանց նախապատրաստմանը ներգրավվում են նաև համապատասխան մասնագիտական միությունների (բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և այլ կազմակերպությունների) ներկայացուցիչներ:

Կենտրոնական բանկի կառավարման կարևորագույն տարրերից են նաև բանկում գործող հանձնաժողովները, կոմիտեները և այլ խորհրդակցական մարմինները, որոնց կազմը և լիազորությունները սահմանվում են ըստ քննարկվելիք հարցերի շրջանակների և գործունեության ոլորտների: Կենտրոնական բանկի հանձնաժողովների և կոմիտեների նիստերի արդյունքում կազմված արձանագրությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի կողմից, իսկ որոշ դեպքերում դրանց արդյունքում Կենտրոնական բանկի նախագահը կայացնում է որոշումներ և տալիս կարգադրություններ: Սույն հաշվետվության համապատասխան բաժիններում կներկայացվեն Կենտրոնական բանկի գործունեության տվյալ ոլորտում գործող հանձնաժողովների կամ կոմիտեների աշխատանքի արդյունքներին վերաբերող տեղեկությունները:

Խորհուրդը՝ որպես քաղաքականություն հաստատող մարմին, զգալի աշխատանք է կատարել ֆինանսական համակարգի կայունացմանն ու զարգացմանը միտված օրենսդրական ու նորմատիվային դաշտի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես՝ Ազգային ժողովի հավանությանն են արժանացել և ընդունվել Կենտրոնական բանկի Խորհրդի կողմից առաջարկված մի շարք կարևորագույն ռեֆորմային օրենքներ և օրենսդրական փոփոխություններ (մանրամասն տե՛ս «Ֆինանսական համակարգի կայունություն, կարգավորում և վերահսկողություն» բաժնում):



ՀՀ ԿԲ վարչությունում քննարկվում են խորհրդի նիստին ներկայացման ենթակա հարցերը:

ՀՀ կենտրոնական բանկի վարչություն

ՀՀ կենտրոնական բանկի վարչությունը ՀՀ կենտրոնական բանկի նախագահին առընթեր խորհրդակցական մարմին է, որն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք, որպես կանոն, գումարվում են երկու շաբաթը մեկ անգամ՝ խորհրդի հերթական նիստերի գումարման օրվան հաջորդող երեքշաբթի օրը:

Վարչության նիստերը վարում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալը:

ՀՀ կենտրոնական բանկի վարչությունը քննարկում է Խորհրդի նիստերին ներկայացվելիք խնդիրները, ինչպես նաև Կենտրոնական բանկի կառավարմանն առնչվող այլ հարցեր:

2010 թ. գումարվել է ՀՀ կենտրոնական բանկի վարչության 22 նիստ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնական բանկը իր խնդիրներն իրագործելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից: Կենտրոնական բանկը ապահովում է իր կողմից իրականացվող գործունեության հաշվետվողականությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի ռազմավարությամբ, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովին է ներկայացնում «Դրամավարկային քաղաքականության ծրագիրը» և «Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (Գնաճի հաշվետվությունը)», ինչպես նաև Կենտրոնական բանկի վարչական ծախսերի նախահաշիվն ու կապիտալ ներդրումների ծրագիրը, համապատասխան կատարողականները:

Բացի Դրամավարկային քաղաքականության ծրագրից և Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունից (Գնաճի հաշվետվություն), Կենտրոնական բանկը հանրությանն է ներկայանում նաև «Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն», «Ֆինանսական կայունության հաշվետվություն», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանբեր», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» պարբերականներով:

Կենտրոնական բանկն իր հաշվետվողականությունն իրագործում է նաև պաշտոնական կայքէջի (www.cba.am) միջոցով, որտեղ տեղադրվում են Կենտրոնական բանկի ռազմավարական զարգացման տեսլականը, պարբերականների հերթական թողարկումները, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված վերաֆինանսավորման տոկոսադրույքի արձանագրություններն ու մամլո հաղորդագրությունները, ԿԲ կառավարմանը, գործունեությանը, ինչպես նաև ֆինանսական համակարգին վերաբերող այլ տեղեկատվություն:

Կենտրոնական բանկի հաշվետվողականության կարևոր տարրերից են նաև բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնց համապատասխանությունը հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին յուրաքանչյուր տարի հավաստվում է միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների կողմից:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱԶՄԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդ

ՀՀ ԿԲ նախագահ

Առաջին տեղակալ

Տեղակալ

Ներքին աուդիտի ծառայություն

Ֆինանսական կայունության կոմիտե

Դրամավարկային կոմիտե

Ղեկավար կազմ

Կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման վարչություն

Կանխիկ դրամաշրջանառության կարգավորման վարչություն

Կանխիկ դրամաշրջանառության հսկողության վարչություն

Կանխիկ դրամաշրջանառության տեղեկատվական համակարգերի վարչություն

Կանխիկ դրամաշրջանառության ապահովման վարչություն

Կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման և կարգավորման գործակալություն

Կանխիկ դրամաշրջանառության հսկողության գործակալություն

Կանխիկ դրամաշրջանառության տեղեկատվական համակարգերի գործակալություն

Կանխիկ դրամաշրջանառության ապահովման գործակալություն

Ֆինանսական կայունության վերլուծության և կանխատեսման վարչություն

Ֆինանսական կայունության ռիսկերի գնահատման վարչություն

Ֆինանսական կայունության ապահովման վարչություն

Ֆինանսական կայունության վերլուծության և կանխատեսման գործակալություն

Ֆինանսական կայունության ռիսկերի գնահատման գործակալություն

Ֆինանսական կայունության ապահովման գործակալություն

Դրամավարկային քաղաքականության վարչություն

Դրամավարկային քաղաքականության իրականացման վարչություն

Դրամավարկային քաղաքականության մոնիտորինգի վարչություն

Դրամավարկային քաղաքականության վերլուծության և կանխատեսման վարչություն

Դրամավարկային քաղաքականության իրականացման գործակալություն

Դրամավարկային քաղաքականության մոնիտորինգի գործակալություն

Դրամավարկային քաղաքականության վերլուծության և կանխատեսման գործակալություն

Ֆինանսական հաշտարարության կենտրոն

Ֆինանսական հաշտարարության կենտրոնի խորհուրդ

Ֆինանսական հաշտարարության կենտրոնի գործադիր տնօրեն

Ֆինանսական հաշտարարության կենտրոնի գործակալություն

Ֆինանսական հաշտարարության կենտրոնի գործակալություն



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ կենտրոնական բանկի համար 2010 թ. առաջնային են համարվել հետևյալ խնդիրները.

Դրամավարկային քաղաքականության թափանցիկության բարձր մակարդակի ապահովում, դրամավարկային քաղաքականության մշակման և կանխատեսումների իրականացման համակարգի կատարելագործում՝ գնաճի բնույթը խորությամբ ուսումնասիրելու միջոցով: Մասնավորապես, 2010 թվականին իրականացված դրամավարկային քաղաքականության հիմնական առաջնահերթություն էր առաջարկի շոկերի (պարենային ապրանքների միջազգային գների աճ, գյուղատնտեսության ճյուղի խորը անկում) հետևանքով ստեղծված բարձր գնաճային միջավայրի պայմաններում հասարակության մոտ կայուն սպասումներ ձևավորող դրամավարկային և արժութային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև թափանցիկության բարձր մակարդակի ապահովումը:

Ֆինանսական համակարգի կայունության, կարգավորման և վերահսկողության կատարելագործում. ճգնաժամի հետևանքների չեզոքացում և ֆինանսական համակարգի ամրապնդման և կայուն զարգացման խթանում՝ շեշտը դնելով ինչպես համակարգի խոշորագույն մասնակցի՝ բանկային համակարգի ցուցանիշների բարելավման և ֆինանսական միջնորդության աճի, այնպես էլ համակարգի այլ մասնակիցների, մասնավորապես՝ ապահովագրական և արժեթղթերի շուկայի զարգացման վրա: 2010 թվականի առաջնահերթություններն էին «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ներդրման հետ կապված՝ ենթակառույցների և ենթաօրենսդրական դաշտի ձևավորումը, ինչպես նաև կենսաթոշակային բարեփոխումների ներքո ներդրումային հիմնադրամների կարգավորման և վերահսկողության դաշտի ձևավորումը:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի կատարելագործում: Եվրոխորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից Հայաստանի Հանրապետության՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ տրված խորհրդատվությունների կատարում, այդ թվում՝ համապատասխան իրավական ակտերի ընդունում, լրամշակում, և առաջընթացի վերաբերյալ հաշվետվության ներկայացում, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հաշվետվությունների և ազդակների հիման վրա տեղեկատվու-

թյան հավաքագրման և վերլուծության արդյունավետության բարձրացման նպատակով գործերի կառավարման համակարգի ներդրում:

Վճարահաշվարկային համակարգի դաշտի կատարելագործում. անկանխիկ վճարումների և ծառայությունների ընդլայնում, ինչպես նաև վճարային համակարգերի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում: Բացի այդ, դրամավարկային քաղաքականության գործիքակազմի (ռեպո / հակադարձ ռեպո գործարքների) կիրառման առավել հարմարավետ և ժամանակակից համակարգերի ներդրում: Կանխիկ դրամաշրջանառության ոլորտում հաճախորդների դրամարկղային սպասարկման գործընթացը բարելավելու նպատակով՝ ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած ԿԲ նոր դրամարկղային հանգույցի շահագործում:

ՀՀ կենտրոնական բանկի գործառույթների մասին *հասարակության տեղեկացվածության*, ինչպես նաև ֆինանսական գրագիտության մակարդակը բարձրացնելու նպատակով Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնի ստեղծում:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է, որով Կենտրոնական բանկը իր մասնակցությունն է ունենում երկարատև ժամանակահատվածում կայուն և բարձր տնտեսական աճի ձեռքբերմանն ուղղված տնտեսական քաղաքականության իրականացմանը: Գների կայունությունը ենթադրում է գնաճի որոշակի մակարդակ, որը Կենտրոնական բանկի կողմից ընդունվում է որպես գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ: ՀՀ-ում գնաճի թիրախը ամրագրվում է ինչպես ՀՀ Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի և Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության, այնպես էլ կայուն զարգացման ծրագրերում և պետական բյուջեի մասին օրենքներում: ՀՀ կենտրոնական բանկը ինքնուրույն է ընտրում իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, միջանկյալ և գործառնական նպատակները և դրամավարկային գործիքները: 2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկը անցում է կատարել գնաճի նպատակադրման ռազմավարությանը, ըստ որի՝ միջանկյալ նպատակը գնաճի կանխատեսված մակարդակն է, իսկ գործառնական նպատակը՝ կարճաժամկետ տոկոսադրույքը: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը ՀՀ-ում ռեպո տոկոսադրույքն է (վերաֆինանսավորման տոկոսադրույք), որը սահմանվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ ըստ նախօրոք հայտարարված տարեկան ժամանակացույցի: Այն յուրաքանչյուր հաջորդ տարվա համար կազմվում է պարտադիր պահուստավորման ժամանակացույցին համապատասխան, իսկ դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները ուժի մեջ են մտնում սահմանմանը հաջորդող օրվանից:[1]

2010 թվականի համար սահմանված գնաճի նպատակային թիրախի (4 ± 1.5%) ապահովմանն ուղղված միջոցառումները նախանշվել են դրամավարկային քաղաքականության ծրագրերում, իսկ դրանց իրականացման փաստացի ընթացքը՝ գնաճի եռամսյակային հաշվետվություններում:

2010 թ. ընթացքում իրականացված դրամավարկային քաղաքականությունը բնութագրվել է մի շարք առանձնահատկություններով:

[1] *Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող «ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն» եռամսյակային պարբերականում: Տես ՀՀ ԿԲ ինտերնետային կայք՝ www.cba.am:*



Կենտրոնական բանկը 2010 թվականի հունվարից իրականացրել է կոշտ դրամավարկային քաղաքականություն:


Մասնավորապես, համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում պարենային և հիմնական հումքային ապրանքների միջազգային գների աճը, 2009 թվականին իրականացված ընդլայնողական հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների փոխանցվող ազդեցությունները և 2010 թվականի ապրիլի 1-ից գազի և ջրի սակագների ավելացումը նպաստել են տարեսկզբին բարձր գնաճային միջավայրի ձևավորմանը: Այսպիսի իրավիճակում Կենտրոնական բանկը 2010 թվականի հունվարից իրականացրել է կոշտ դրամավարկային քաղաքականություն՝ առաջին հինգ ամիսներին շարունակ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ ընդհանուր առմամբ 2.5 տոկոսային կետով՝ զուգահեռաբար իրականացնելով ապադոլարայնացման միջոցառումներ: Իրականացված քաղաքականության արդյունքում 12-ամսյա գնաճը փետրվարին արձանագրված 9.4%-ից շարունակաբար նվազել է և հունիսին մոտեցել նպատակային միջակայքի վերին սահմանին՝ կազմելով 5.8%: Սակայն հունիսից իրավիճակը կտրուկ փոխվել է, և ի հայտ են եկել բացառապես առաջարկի գործոններով պայմանավորված նոր գնաճային ազդակներ:

Այսպես, ցորենի միջազգային գնի կտրուկ աճի, այնուհետև նաև պարենային ապրանքների միջազգային գների աճի և գյուղատնտեսության ճյուղի խորը անկման հետևանքով գնաճը տարվա երկրորդ կեսին էապես ավելացել է: Արդյունքում՝ 2010 թվականի ընթացքում ՀՀ-ում արձանագրվել է 9.4% գնաճ, որի միայն 7.5 տոկոսային կետը պարենային ապրանքների գների աճի հաշվին էր, ընդ որում՝ ներքին գյուղատնտեսական ապրանքների գների աճի հաշվին արձանագրվել է շուրջ 5 տոկոսային կետ գնաճ, և ավելի քան 2 տոկոսային կետ գնաճ արձանագրվել է ներմուծվող պարենային ապրանքների գների աճի հաշվին: 2010 թվականի հունվար-դեկտեմբերին արձանագրված միջին գնաճը նախորդ տարվա միջինի նկատմամբ կազմել է 8.2%:


Վերոնշյալ միտումները վկայում են, որ բարձր գնաճային միջավայրը ձևավորվել է բացառապես առաջարկի գործոնների ներքո, որոնք ենթակա չեն դրամավարկային կարգավորման: Այս իրավիճակում, չնայած գնաճի արագացմանը, Կենտրոնական բանկը ձեռնպահ է մնացել վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումից, քանի որ բոլոր գնահատումները ցույց էին տալիս, որ ներքին պահանջարկի դանդաղ տեմպերով վերականգնումը գնաճային ճնշումներ չի ստեղծում:

Այնուամենայնիվ, արդեն իսկ տարվա չորրորդ եռամսյակում ԿԲ-ի կողմից սկսեցին ազդակներ տրվել տնտեսությանը, որ առաջարկի գոր-

ծոնների և դրանց երկրորդային ազդեցությունների ուժգնացման պարագայում առավել հավանական է դառնալու դրամավարկային պայմանների խստացումը:



2010 թվականին արձանագրվել է 2.6% տնտեսական աճ: Ողջ տարվա ընթացքում մեծ է եղել արդյունաբերության և ծառայությունների ճյուղերի նպաստումը տնտեսական աճին: Այսպես. արդյունաբերության, ծառայությունների և շինարարության ճյուղերում 2010 թվականին արձանագրվել է ավելացված արժեքի համապատասխանաբար 9.5%, 4.6% և 3.7% աճ, մինչդեռ գյուղատնտեսության ճյուղում գրանցվել է խոր անկում՝ 13.4%:



Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքում մեծ նշանակություն է տրվել գիտահետազոտական աշխատանքներին, որոնց արդյունքը էապես ազդել է դրամավարկային քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունման

վրա: Գիտահետազոտական աշխատանքներն ընդգրկել են տնտեսության ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակներում տեղի ունեցող զարգացումների ուսումնասիրությունները և դրանց արդյունքում կառուցվող մոդելները, որոնք լայնորեն կիրառվել են դրամավարկային կանխատեսումների իրականացման փուլում:

2010 թվականին ԿԲ տնտեսական հետազոտությունների հիմնական թիրախ են հանդիսացել հետևյալ խնդիրները և ուղղությունները.

- Ընդհանուր հավասարակշռության դինամիկ ստոխաստիկ մոդելների շարունակական ընդլայնումը և զարգացումը. մոդելների պարամետրերի գնահատումը ժամանակակից հավանականային մեթոդների և հաշվողական ծրագրային փաթեթների կիրառման միջոցով:
- ՀՀ-ում մարդկային կապիտալի կուտակման, միգրացիայի և միգրանտների կողմից իրենց ընտանիքի անդամներին ու հարազատներին ուղարկված դրամական փոխանցումների միաժամանակյա ազդեցության գնահատումը մակրոտնտեսական իրավիճակի և երկարաժամկետ տնտեսական զարգացման վրա:
- Մակրոտնտեսական ցուցանիշների կարճաժամկետ կանխատեսումներ կատարելու նպատակով՝ դինամիկ գործոնային մոդելների մշակումը և դրանց ընդլայնումը: Կառուցվածքային կանխատեսումային մոդելների հավանականային և տնտեսաչափական գնահատումը և դրանց հիման վրա կանխատեսումների իրականացումը:
- ՀՀ բանկային համակարգի զարգացման մոդելավորումը՝ ֆինանսական ոլորտում առկա կոշտությունների ներմուծման միջոցով: Դրամավարկային քաղաքականության վրա ֆինանսական կոշտությունների ազդեցությունների վերլուծությունը և գնահատումը: Միջբանկային շուկայի ռիսկերի մոդելավորումը և դրանց կառավարմանն ուղղված համապատասխան քաղաքականության մշակումը:
- Աշխատանքի շուկայի անկատարությունները նկարագրող մակրոմոդելների կառուցումը և դրամավարկային քաղաքականության ու դրա փոխանցումային ուղու վրա առկա անկատարությունների հնարավոր ազդեցությունների ուսումնասիրությունը:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Կենտրոնական բանկը նախատեսում է ընդլայնել տնտեսական հետազոտություններով զբաղվող ստորաբաժանման կազմը և այն որպես հիմք օգտագործել Դիլիջանում կառուցվող ֆինանսաբանկային համալիրում տնտեսական հետազոտությունների և կրթական կենտրոն հիմնելու համար: Նախատեսվում է, որ այնտեղ կիրականացվեն ոչ միայն տնտեսական հետազոտություններ, այլև կանցկացվեն գիտական և կրթական միջոցառումներ՝ ներգրավելով միջազգային հեղինակավոր գիտական և ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև առաջավոր գիտնականների:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում ԿԲ կողմից իրականացվել են վիճակագրական դաշտի բարելավման աշխատանքներ: Մասնավորապես, արտաքին հաշիվների վիճակագրությունը ԿԲ տեղափոխելու հետ կապված, մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, ինչպես նաև քննարկվել և հաստատվել է «Արտաքին հաշիվների կազմման հայեցակարգը»: Մշակվել է «Կենտրոնական բանկում գնաճի սպասումների գնահատման համակարգի ներդրման հայեցակարգ», իրականացվել են ԱՊՊԱ տեղեկատվական շտեմարանի ստեղծման աշխատանքներ:


Արտաքին աշխարհի հետ հարաբերությունները էական ազդեցություն են թողնում ներքին գների, ամբողջական պահանջարկի, արտարժութային շուկայում հավասարակշռության և այլ տնտեսական բնութագրիչների վրա: Այդ պատճառով դրամավարկային քաղաքականության իրականացման ժամանակ էական է արտաքին հաշիվների որակյալ վիճակագրության հավաքագրումը:

Արտաքին հաշիվների վիճակագրության ոլորտում կարևորվում է արտաքին հաշիվների վիճակագրության զարգացումը, մասնավորապես՝ «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի» կազմման նոր ձեռնարկի (BPM6) սկզբունքներին համապատասխան վիճակագրության կազմումը և պատմական շարքերի վերանայումը: Կենտրոնական բանկում արտաքին հաշիվների կազմման պարագայում մեկ այլ հիմնական խնդիր է ոչ ֆինանսական կազմակերպություններից տվյալների ուղղակի հավաքագրման համակարգի և, դրան զուգահեռ, միջազգային գործառնությունների համակարգի ներդրումը: Որպես շարունակական գործընթաց՝ իրականացվում է դրամական փոխանցումների վիճակագրության բարելավում:

Կարևորելով մակրոտնտեսական մոդելավորման և դրամավարկային քաղաքականության մշակման ու իրականացման փուլերում տնտեսավարող սուբյեկտների սպասումների դերը՝ ԿԲ-ն 2011 թվականից գնահատելու է գնաճի սպասումները, ընդ որում՝ պատկերն ամբողջացնելու համար գնահատվելու են և՛ տնային տնտեսությունների, և՛ ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների գնաճային սպասումները, ինչպես նաև կատարելագործվելու է անկախ փորձագիտական կանխատեսումների գործող համակարգը: Միևնույն ժամանակ, մյուս բոլոր ընտրանքային հետազոտությունները շարունակելու են միտված լինել տարբեր բնագավառներում առկա վիճակի առավել ճշգրիտ գնահատմանը և զանազան տնտեսական երևույթների վերաբերյալ սպասումների և առկա հիմնախնդիրների բացահայտմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


2010 թվականի ընթացքում միջազգային պահուստները, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել են շուրջ 138.2 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել շուրջ 1865.5 մլն ԱՄՆ դոլար:



ՀՀ միջազգային պահուստների մակարդակը

Միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 0.68% (նախորդ տարի՝ 1.61%) իսկ ստացված եկամուտը՝ 12.4 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 23.4 մլն ԱՄՆ դոլար):


ՀՀ միջազգային պահուստների միջին եկամտաբերությունը և ընդհանուր եկամուտները զգալիորեն նվազել են նախորդ տարվա համեմատ՝ պայմանավորված տնտեսական և ֆինանսական միջավայրերի համընդգրկուն փոփոխությամբ:



ՀՀ միջազգային պահուստների կառավարումից ստացված եկամուտներ (եկամտաբերություն)

2009 թվականից ի վեր տոկոսադրույքները շարունակաբար ունեցել են ցածր մակարդակ՝ պայմանավորված ԱՄՆ-ի և Եվրոգոտու կենտրո-

նական բանկերի՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարմանն ուղղված միջոցառումներով և գնաճի ցածր մակարդակով: Տարեվերջին տոկոսադրույքների մակարդակը զարգացած երկրներում դրսևորել է աճի միտում, ինչը պայմանավորվել է շուկայի մասնակիցների դրական սպասումներով և 2010 թվականի ընթացքում ԱՄՆ և Եվրոգոտու կենտրոնական բանկերի կողմից դրամավարկային քաղաքականության գործիք համարվող տոկոսադրույքների ակնկալվող բարձրացմամբ:



2010 թվականի ընթացքում տոկոսադրույքների կայուն ցածր մակարդակը, ինչպես նաև ցածր տատանողականությունը սահմանափակել են պահուստների եկամտաբերության մակարդակը և ակտիվ կառավարումից եկամուտը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տոկոսադրույքները հարաբերականորեն երկար ժամանակ ունեցել են շատ ցածր մակարդակ, պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունները ևս 2009 թվականի համեմատությամբ նվազել են: Ամփոփելով նշենք, որ 2009 թվականի համեմատությամբ, 2010 թվականի ընթացքում ցածր են եղել պարտատոմսերի և՛ գնային, և՛ արժեկտրոնային եկամտաբերությունները:

Սակայն նախորդ երեք տարիներին պահուստների կառավարման ոլորտում իրականացված բարեփոխումները, մասնավորապես՝ գործիքակազմի ընդլայնումը և ակտիվ կառավարման փորձի կուտակումը, հնարավորություն տվեցին հնարավորինս ճկուն լինել՝ 2010 թվականի եվրոպական պարտքային ճգնաժամին արձագանքելու առումով:

Տարեվերջին կատարված վերլուծությունների արդյունքներով, ժամկետայնության ընտրությունը լիովին արդարացված է եղել երկու արժեթղթապանակների համար և գործող ուղենիշերն ապահովել են ամենա-

բարձր եկամտաբերություն/ռիսկ հարաբերակցությունը, ինչպես նաև ունեցել են լավագույն ցուցանիշները դրական եկամտաբերության հաճախականության, տատանողականության սիմետրիկության և VaR հետադարձ ստուգման արդյունքներով՝ ՀՀ ԿԲ համար ներդրումային հանդիսացող բազմության մեջ:

Ներդրումային հանձնաժողով

Ներդրումային հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում որոշումներ կայացնելու իրավասություններ ունեցող մարմին է, որը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջազգային պահուստների կառավարման վերաբերյալ խորհրդի որոշումներին համապատասխան, իրականացնում է միջազգային պահուստների կառավարման որոշումների ընդունման և դրանց կատարման վերահսկողության գործառույթներ, ինչպես նաև քննարկում է ներդրումային գործունեության ընթացիկ համակարգմանն առնչվող խնդիրներն ու ֆինանսական վերլուծության արդյունքները:

Նշված գործառույթներն իրականացնելու նպատակով հանձնաժողովը քննարկում է միջազգային պահուստների կառավարման ռազմավարական և մարտավարական, ինչպես նաև կառավարման ընթացիկ վերահսկողության խնդիրներ:

Հանձնաժողովի նիստերը, որպես կանոն, գումարվում են ամիսը մեկ անգամ:

2010 թ. գումարվել է Ներդրումային հանձնաժողովի 9 նիստ, ընդունվել է 5 որոշում:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտը մշտապես վերանայվում և կատարելագործվում է: Կարևորելով բանկային, ապահովագրական և արժեթղթերի շուկաների համահունչ զարգացման քաղաքականությունը՝ 2010 թ. Ազգային ժողովն ընդունել է Կենտրոնական բանկի կողմից մշակված մի շարք ռեֆորմային օրենքներ:[2]

1. 2010 թվականի 2-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված *«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքների փոփոխությունները:*

Օրենքը սահմանում է ՀՀ տարածքում ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի կամ օրինական հիմքով տիրապետող այլ անձանց կողմից երրորդ անձանց պատճառված վնասներից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պարտականությունը:



Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտը մշտապես վերանայվում և կատարելագործվում է:

[2] *Ֆինանսական համակարգի մասին մանրամասն տե՛ս «Հայաստանի ֆինանսական համակարգը (2010). զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» և «Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2010» պարբերականներում (www.cba.am):*

Օրենքի հիմնական նպատակը ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանությունն է, մասնավորապես՝ նրանց պատճառված վնասի հատուցումն ապահովող արդյունավետ մեխանիզմների սահմանումը:

2. 2010 թվականի 2-րդ եռամսյակում ՀՀ Ազգային ժողովն ընդունել է *««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը*, ըստ որի՝ երաշխավորված ավանդի չափերն ավելացվել են՝ դրամային ավանդի դեպքում դառնալով 4 միլիոն ՀՀ դրամ, իսկ արտարժութային ավանդի դեպքում՝ 2 միլիոն ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկին՝ որպես միակ հիմնադրի, իրավունք է վերապահվել Հիմնադրամում կատարել մինչև հինգ միլիարդ ՀՀ դրամի ներդրում: Այս օրենքի հետ մեկտեղ ընդունվել է նաև ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում է, որ եթե հատուցման դեպք առաջանալու պահին կարող է վտանգվել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունությունը (իրացվելիությունը և/կամ վճարունակությունը), ապա Կենտրոնական բանկն իրավունք ունի Հիմնադրամին տրամադրել բյուջետային երաշխիքով ապահովված վարկեր: Նշված օրենքների հետ մեկտեղ ընդունված ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է նաև, որ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին բյուջետային երաշխիք տրամադրվում է Կառավարության որոշմամբ՝ առանց ապահովման միջոցի:



Ֆինանսական համակարգի հաստատությունների նկատմամբ իրականացվել է ինչպես փաստաթղթային, այնպես և տեղերում վերահսկողություն:

3. 2010 թվականի 2-րդ եռամսյակում ՀՀ Ազգային ժողովն ընդունել է *««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքները*: Օրենքների ընդունման նպատակը բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերին ընտրության հնարավորության ընձեռումն է՝ իրենց մասնակիցների ռեեստրի վարումը հանձնել կա՛մ Կենտրոնական դեպոզիտարիային, կա՛մ մասնակիցների ռեեստրի վարման իրավասություն ունեցող՝ իրենց հետ չփոխկապակցված այլ մասնագիտացված կազմակերպությանը (պահառուներին): Միաժամանակ հստակեցվել է գործող օրենքի այն դրույթը, որի համաձայն՝ բաժնետիրական ընկերություն հանդիսացող ներդրումային ծառայություն մատուցող անձինք չեն կարող անձամբ վարել իրենց մասնակիցների ռեեստրը, ինչպես նաև դրա վարումը հանձնել իրենց հետ փոխկապակցված պահառուներին:

4. 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված *«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքների փոփոխությունները:*

Որպես ֆոնդի առանձին տեսակ են նախատեսվում կենսաթոշակային ֆոնդերը, որոնց առանձնահատկությունների սահմանումը վերապահված է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին:

5. 2010 թվականի հոկտեմբերին ՀՀ Ազգային ժողովի կողմից 1-ին ընթերցմամբ ընդունվել են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, որոնց նպատակը վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորման և վերահսկողության պահանջների խստացման միջոցով այդ կազմակերպությունների և ֆինանսական համակարգի կայունության ամրապնդումն է և հուսալիության բարձրացումը: Վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվ՝ 100 միլիոն դրամի չափով:

Հստակեցվել են վճարահաշվարկային ծառայությունների տեսակները, դրանց սահմանումները հնարավորինս համապատասխանեցվել են Եվրոմիության օրենսդրության պահանջներին: Կանոնակարգվել են վճարահաշվարկային կազմակերպություններին պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև այդ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների պատվիրակման հետ կապված հարցերը:

6. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների հետ մեկտեղ ՀՀ ԱԺ կողմից 1-ին ընթերցմամբ ընդունվել են նաև *«Արժեթղթերի շուկայի մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներում առաջարկված փոփոխությունները*:

Փոփոխությունների նպատակը ներդրումային ընկերությունների և վարկային կազմակերպությունների գործունեության տարանջատումն է, քանի որ նման տարանջատման բացակայության պայմաններում այդ կազմակերպությունները, ըստ էության, նույնանում են: Ըստ առաջարկվող փոփոխությունների՝ վարկային կազմակերպությունները չեն մատուցի ներդրումային ծառայություններ, բացառությամբ իրենց հաշվին և իրենց անունից արժեթղթերով գործարքներ կատարելուց (քանի որ միայն նշված գործառնություններն են կապված վարկային կազմակերպության գործունեության հետ), իսկ ներդրումային ընկերությունները չեն իրականացնի վարկային կազմակերպության գործունեություն:

7. 2010 թվականի հոկտեմբերին ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունել է *«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքների փոփոխությունների նախագծերը*: Նախագծերի ներկայացման նպատակը Հայաստանի Հանրապետության օրենսդրության որոշ խոչընդոտող նորմերի փոփոխության արդյունքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց հնարավորություն ընձեռելն է ներգրավելու ստորադաս փոխառություններ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստորադաս փոխառությունները լրացուցիչ կապիտալ ներգրավելու առավել արդյունավետ և արագ գործիք են, քան, օրինակ՝ կանոնադրական կապիտալի ավելացումը:

8. 2010 թվականի դեկտեմբերին ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ Կառավարություն է ներկայացրել *«Սնանկության մասին» և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքների փոփոխությունների նախագծերը*: Փոփոխությունների նպատակը գրավով, երաշխավորությամբ և երաշխիքով ապահովված պահանջներ ունեցող պարտատերերի պահանջների բավարարումն է սնանկության գործընթացի ժամանակ՝ առանց մորատորիումի գործողության: Դա նշանակում է, որ ֆինանսական կազմակերպությունը կամ ցանկացած այլ անձ իրավունք ունի առանց սպասելու սնանկության գործընթացների ավարտին, իր պահանջների բավարարում ստանալ գրավադրված գույքից, երաշխիք կամ երաշխավորություն տված անձի միջոցներից:

9. 2010 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ Կառավարություն է ներկայացրել *«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների նախագծերը*: Այդ նախագծերի ներկայացման նպատակն է լուծել գրավի առարկա գույքի բռնագանձման ժամանակ առաջացող հարկային խնդիրները: Նախագծերով սահմանվել են, որ գրավի առարկա գույքի արտադատական կարգով իրացման այն դեպքերում, երբ գրավի առարկան ի սեփականություն է անցնում բանկին կամ վարկային կազմակերպությանը, իրացման հետևանքով ծագող եկամտահարկի վճարման պարտավորությունը հետաձգվում է մինչև բանկի կամ վարկային կազմակերպության կողմից երրորդ անձին այդ գույքի իրացումը, բայց ոչ ուշ, քան վեց ամիս ժամկետով: Ընդ որում, եկամտահարկի հաշվարկման նպատակով գրավատուի՝ գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում գրավ դրված գույքի իրացման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը:

Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների և տնտեսության իրական ու ֆինանսական հատվածների զարգացումների ներքո Կենտրոնական բանկը 2010 թ. իրականացրել է նաև մի շարք ենթաօրենսդրական փոփոխություններ:

Կենտրոնական բանկը շարունակել է ֆինանսական համակարգի վերահսկողության և սպառողների շահերի պաշտպանության գործառույթները:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողով

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում մշտապես գործող հանձնաժողով է, որը նախագահում է Կենտրոնական բանկի նախագահը: Լիցենզավորման և վերահսկողության նիստերի ընթացքում, հաշվի առնելով նիստի ընթացքում տրված բանավոր կամ գրավոր եզրակացությունը, Կենտրոնական բանկի նախագահի կողմից որոշում է կայացվում կամ հանձնարարական է տրվում: Հանձնաժողովը քննարկում է ֆինանսական համակարգի մասնակիցների գրանցման, լիցենզավորման վերաբերյալ հարցեր, լսում է ֆինանսական կազմակերպություններում իրականացրած վերստուգումների արդյունքում արձանագրված խախտումների և դրանց վերացման վերաբերյալ տեղեկատվություն, կարծիք է տալիս ֆինանսական կազմակերպությունների ղեկավարների մասնագիտական համապատասխանության վերաբերյալ: 2010 թ. գումարվել է Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի 66 նիստ:



Ֆինանսական համակարգի հաստատությունների նկատմամբ իրականացվել է ինչպես փաստաթղթային, այնպես և տեղերում վերահսկողություն:

2010 թ. Կենտրոնական բանկի կողմից իրականացվել են 380 «տեղերում ստուգումներ», մասնավորապես՝


- բոլոր ուղղություններով (7) և նպատակային ստուգումներ (24) բանկերում,
- բոլոր ուղղություններով (6) և նպատակային ստուգումներ (2) վարկային կազմակերպություններում,
- բոլոր ուղղություններով (3) և նպատակային ստուգումներ (8) ապահովագրական ընկերություններում,
- ստուգումներ ներդրումային ծառայություն մատուցող ընկերություններում (4),
- ֆինանսական շուկայի այլ մասնակիցների 325 ստուգում (արտարժույթի փոխանակման կետեր, գրավատներ, վճարահաշվարկային կազմակերպություններ և այլն):

Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները կանխվել են: Ստուգումների ժամանակ, ի թիվս ֆինանսական հաստատությունների ռիսկերի, ուշադրության կենտրոնում են եղել նաև փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և սպառողների շահերի պաշտպանության ու շուկայի վարվելակերպի պահանջները:


2010 թ. ընթացքում շարունակվել է լայնածավալ միջոցառումների իրականացումը սպառողների շահերի պաշտպանության և հասարակության տարբեր նպատակային խմբերի ֆինանսական և տնտեսագիտական իրազեկվածության բարձրացման ուղղությամբ. մասնավորապես՝ շարունակվել են «Ֆինանսներ բոլորի համար» ինտերնետային կայքի (www.abcfinance.am) զարգացման աշխատանքները, իրականացվել են ԱՊՊԱ համակարգի լուսաբանման միջոցառումներ և աշխատանքներ, միջնակարգ դպրոցների աշակերտների համար մշակվել է «Ֆինանսատնտեսագիտական կրթման ծրագրերի գնահատման մեթոդաբանության ուղեցույցը», մշակվել է «ՀՀ-ում կենսաթոշակային համակարգի վերաբերյալ ընդհանուր և մասնագիտական գիտելիքի և տեղեկատվության շարունակական մատուցման ծրագիրը» և այլն:

2010 թ. ՀՀ ֆինանսական համակարգը ցուցաբերել է բարձր ճկունություն. հաղթահարելով նախորդ տարվա ճգնաժամային մարտահրավերները՝ կրկին ակտիվացել է վարկային շուկան և վերականգնվել մինչճգնաժամային եկամտաբերության մակարդակը:

ՀՀ ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 91%-ը:



Բանկային համակարգը 2010 թ. ապահովել է ակտիվների 17.7% աճ, կապիտալի 14.6% աճ և շահութաբերության բարձր մակարդակ (շահութաբերությունն ըստ ակտիվների կազմել է 2.2%, ըստ կապիտալի՝ 10.7%):



Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը 2010 թվականին բավականին բարձրացել է, սակայն դեռևս զիջում է ԱՊՀ շատ երկրների նույն ցուցանիշին: Բանկային համակարգի ակտիվների աճի տեմպը գերազանցել է անվանական ՀՆԱ-ի աճի տեմպը, ինչի արդյունքում բանկային համակարգի ակտիվների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը 2010 թվականին ավելացել է 2.6 տոկոսային կետով՝ կազմելով 44.5%: Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունն ավելացել է 3.3 տոկոսային կետով և կազմել 25:

Վարկանշման հանձնաժողով

Վարկանշման հանձնաժողովը Կենտրոնական բանկի նախագահին կից գործող մշտական հանձնաժողով է, որը քննարկում է վարկանշման ոլորտին վերաբերող իրավական ակտերը, մեթոդաբանությունը և առանձին ձեռնարկությունների վարկանիշերը: Տարվա ընթացքում գումարվել է վարկանշման հանձնաժողովի 4 նիստ, որի ընթացքում ընդունվել են առանձին կազմակերպությունների վարկանշման և մեթոդաբանության մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման վերաբերյալ որոշումներ:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՆՇՈՒՄ

2004 թվականից ԿԲ-ն ձեռնարկել է Հայաստանի առևտրային կազմակերպությունների վարկանշման աշխատանքներ, և արդեն 2005 թ. սեպտեմբերին հրապարակվել են առաջին 16 կազմակերպությունների վարկանիշերը:

Կենտրոնական բանկի կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման հիմնական նպատակը այդ կազմակերպությունների՝ ներգրաված պարտավորությունները ժամանակին և ամբողջ ծավալով սպասարկելու (մարելու) ունակության գնահատումն է:

Վարկանիշերը գրանցվում են հայկական այբուբենի տառերով, ընդ որում, առավելագույն վարկանիշ է համարվում «Ա+», իսկ նվազագույնը՝ «Զ» վարկանիշը: Համաձայն «ՀՀ ԿԲ կողմից առևտրային կազմակերպությունների վարկանշման կարգի»՝ «Ա+»-ից «Գ-» վարկանիշերը համարվում են ներդրումային վարկանիշեր, իսկ «Դ+»-ից «Զ» վարկանիշերը՝ ոչ ներդրումային վարկանիշեր: Վարկանշվում են տարբեր ոլորտի ձեռնարկություններ:


2010 թ. սկզբին վարկանշված կազմակերպությունների քանակը կազմել է 35, որոնց թիվը չի փոփոխվել գործընթացի ավարտին:[3]

2010 թ. որոշակի փոփոխություն է կատարվել վարկանշման մեթոդաբանության մեջ՝ մշակվել և ներդրվել է ավիաընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման մեթոդաբանությունը:

Վերավարկանշման արդյունքում 19 կազմակերպության վարկանիշ մնացել է անփոփոխ, 10 կազմակերպության վարկանիշ իջել է, իսկ 6 կազմակերպության վարկանիշ բարձրացել է:

2010 թ. վերջի դրությամբ ոչ մի կազմակերպության չի շնորհվել Ա խմբի վարկանիշ: Բ խմբի վարկանիշ է տրվել 7 կազմակերպությունների (նախորդ տարի՝ 7), Գ խմբի վարկանիշ ստացած ձեռնարկությունների քանակը կազմել է՝ 20 (նախորդ տարի՝ 20), իսկ Դ խմբի վարկանիշ ստացած ձեռնարկությունների քանակը՝ 8 (նախորդ տարի՝ 8):

Տարվա ընթացքում գումարվել է վարկանշման հանձնաժողովի 4 նիստ, որի ընթացքում ընդունվել են առանձին կազմակերպությունների վարկանշման և մեթոդաբանության մեջ փոփոխությունների ու լրացումների կատարման վերաբերյալ որոշումներ:



2005-2010թթ. ընթացքում վարկանշված առևտրային կազմակերպություններն ըստ վարկանիշերի

[3] *Վարկանշված առևտրային կազմակերպությունների ամբողջական ցանկը տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայքում՝ http://www.cba.am:*

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2010 թվականի ընթացքում ՀՀ վճարահաշվարկային համակարգում գրանցվել են մի շարք դրական միտումներ: Համաձայն ՀՀ ԿԲ տեսլականի՝ վճարահաշվարկային բնագավառում աշխատանքները կատարվել են հետևյալ 3 հիմնական ուղղություններով.[4]

1. Վճարահաշվարկային համակարգերի և ընթացակարգերի նախագծում, մշակում և ներդրում:

2. Անկանխիկ վճարումների զարգացում, նոր վճարային գործիքների և գործառնությունների ներդրում:

3. ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման ու կայունության ապահովում, համակարգը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի՝ ՀՀ կենտրոնական բանկի կարևորագույն խնդիրներից է գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը: Այս խնդրի իրագործման նպատակով Կենտրոնական բանկը կարգավորում և վերահսկում է ՀՀ վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ նաև վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը:

1. Ճկուն դրամավարկային քաղաքականության գործիքակազմի ապահովման նպատակով ԿԲ-ն հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է նոր վճարային համակարգի ստեղծման աշխատանքներ:

Մասնավորապես՝ համակարգի հիմնական սկզբունքներն են՝

- ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության գործիքակազմի կիրառման առավել հարմարավետ և ժամանակակից հնարավորություններ՝ կապված ռեպո / հակադարձ ռեպո գործառնությունների, աճուրդների իրականացումը ապահովելու հետ:

Կենտրոնական բանկը կարգավորում և վերահսկում է ՀՀ վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ նաև վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը:



- Բանկային համակարգի իրացվելիության հարմարավետ և ճկուն կառավարման մեխանիզմների առկայություն:

[4] Վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ մանրամասն հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվող «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր» եռամսյակային պարբերականում, «ՀՀ ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» տարեկան հաշվետվությունում և «Ֆինանսական կայունության հաշվետվությունում»: Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետային կայք՝ www.cba.am:

- Գործառնություններ կատարելու հնարավորություն ոչ միայն պետական և ԿԲ կողմից թողարկված արժեթղթերով, այլ նաև՝ բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ արժեթղթերով:

Այդ նպատակով Կենտրոնական դեպոզիտարիայի հետ մշակվել և ներդրվել է հաղորդագրությունների փոխանակման համապատասխան ընթացակարգ:

Համակարգը կառավարվելու է ՀՀ ԿԲ կողմից, մասնակիցները լինելու են միայն ՀՀ տարածքում գործող բանկերը: Հաշվարկների համար օգտագործվելու են ՀՀ ԿԲ-ում բացված հատուկ հաշիվները:

Վերը նշված վճարային համակարգը շահագործման կհանձնվի 2011 թվականին:

«Արմենիան Քարդ» ՓԲԸ վճարումների միասնական համակարգը մեծ դեր է խաղում մանրածախ վճարումները անկանխիկ եղանակով իրականացնելու գործում՝ նպաստելով նաև ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների զարգացմանը:

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի համակարգային նշանակությամբ և վճարային համակարգերի կառավարման արդի միտումների կիրառման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հաշվետու տարում, McKinsey հեղինակավոր կազմակերպության խորհրդատվությամբ, էապես բարեփոխվել է ընկերության կառավարման համակարգը՝ այն համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձին և արդի պահանջներին:

2010 թ. ընթացքում «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն իրականացրել է մի շարք նախագծեր, որոնք ուղղված են եղել համակարգի տեղեկատվական անվտանգության մակարդակի բարձրացմանը, ինտերնետային վճարային համակարգի նորացմանը, նոր միջազգային վճարային համակարգին անդամակցությանը, սակագնային քաղաքականության վերանայմանը՝ նպատակ ունենալով ապահովել համակարգի համապարփակ զարգացումը՝ հաշվի առնելով քարտային համակարգի զարգացման ընթացքը և միջազգային վճարային համակարգի պահանջները:

2010 թ. ընկերությունը սկսել է AmEx քարտերի սպասարկումը, որի լիիրավ և բացառիկ կարգավիճակ է ձեռք բերել համակարգի անդամ ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը:

2010 թ. ներդրվել է համակարգի կայքի նոր վճարային ծրագիրը, որը զգալիորեն ավելացրել է համակարգի թողունակությունը և ապահովել գործունեության անընդհատությունը:

2011 թ. հունվարի 1-ից ընկերությունը թողարկելու է միայն DDA տեխնոլոգիայով չիպային քարտեր: Համակարգում մշակվել է նոր սակագնային քաղաքականություն՝ խթանելու համար առավել ակտիվ քարտային գործունեություն ծավալող՝ համակարգի անդամ բանկերին: Առաջիկայում նախատեսվում է իրականացնել համակարգի ծրագրային ապահովման վերազինման աշխատանքներ, ինչը հնարավորություն կտա լուծելու մի շարք կարևորագույն խնդիրներ:

2. 2010 թ. ընթացքում ՀՀ տարածքում վճարային ծառայություններ են մատուցվել 22 առևտրային բանկերի և 11 վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից: Բանկային համակարգով կատարված անկանխիկ վճարումների ծավալը 2010 թ. կազմել է 17 116 866 մլն ՀՀ դրամ:

Անհրաժեշտ է նաև նշել, որ, ընդհանուր առմամբ, մեծացել է մատուցվող ֆինանսական ծառայությունների նկատմամբ պահանջարկը: Մասնավորապես՝ 2010 թ. վերջի դրությամբ բանկային համակարգում բացված հաշիվների քանակը կազմել է 1 804 579: Վճարային քարտերի թողարկումը ավելացել է 25.86%-ով՝ կազմելով 729 298 քարտ: 30.4%-ով ավելացել է նաև վճարային քարտերով կատարված գործարքների ծավալը՝ կազմելով 558 350 մլն ՀՀ դրամ, իսկ գործարքների քանակը ավելացել է 27.6%-ով (11 292 931 հատ):

ՀՀ ԿԲ կողմից մշակվում են անկանխիկ վճարումների զարգացման ուղիներ:

3. Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում շարունակվել են կենսաթոշակների վճարումները բանկային և վճարահաշվարկային համակարգի միջոցով անկանխիկ եղանակով իրականացնելու աշխատանքները: Մշակվել են կենսաթոշակները բանկային հաշիվների միջոցով վճարելու սկզբունքները:

ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի 73-Ն որոշմամբ հաստատվել է «Էլեկտրոնային փողերի թողարկման և սպասարկման (շրջառառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողերով գործարքների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/2-ը, որի նպատակն է կանոնակարգել էլեկտրոնային փողերի թողարկման, շրջառառության կարգը, էլեկտրոնային փողերով գործարքների իրականացումը:

ՀՀ ԿԲ խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի 74-Ն որոշմամբ հաստատվել է «Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկ-

տրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/1-ը, որի նպատակն է կանոնակարգել էլեկտրոնային փող թողարկող կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը:


Նշված իրավական փաստաթղթերով ֆինանսական շուկայի մասնակիցների համար հստակեցվել է էլեկտրոնային փողերով գործառնությունների իրականացումը կարգավորող իրավական դաշտը:

Մասնավորապես՝ շարունակաբար կատարվել են «Երաշխիքային հիմնադրամի ստեղծման, տեղաբաշխման և օգտագործման կանոնների», «Առանց ակտիվների նախնական դեպոնացման կնքվող գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնակարգի», ինչպես նաև «Երաշխիքային հիմնադրամի մասնակցության վերաբերյալ պայմանագրի» նախագծերի մշակման աշխատանքներ:

Նախատեսվում է օրենքի ընդունումից հետո՝ 2011 թ., ապահովել համապատասխան ենթաօրենսդրական դաշտ:

ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2010 թ. ՀՀ կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 8.3%-ով՝ կազմելով 1200.8 մլրդ դրամ: ՀՀ կենտրոնական բանկն իր հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացրել է Երևանում գտնվող ԿԲ գլխավոր գրասենյակի դրամարկղի, Գորիսի, Վանաձորի ու Հրազդանի (Ծաղկաձորի) տարածքային դրամարկղային կենտրոնների (ՏԴԿ) միջոցով:



ԿԲ դրամարկղային շրջանառության 21%-ն իրականացվել է ՏԴԿ-ների միջոցով: Ինչպես և նախորդ տարիներին, ՏԴԿ-ների միջոցով առավելապես իրականացվել են կանխիկի ելքագրման գործառնություններ. դրամարկղային ելքերի ծավալը կազմել է ՏԴԿ-ների դրամարկղային շրջանառության ընդհանուր ծավալի 92.1%-ը:

2010 թ. ընթացքում շահագործման է հանձնվել ԿԲ գլխավոր գրասենյակի նոր դրամարկղային հանգույցը, որը հագեցած է հաճախորդների սպասարկման, կանխիկ դրամի մշակման և պահպանման նորագույն տեխնիկայով, կիրառվում են գործընթացների կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաներ, ավտոմատ համակարգեր և այլ հարմարություններ:


Իր հաճախորդների դրամարկղային սպասարկման պայմանների բարելավման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է դեռևս նախորդ տարիներին սկսված գործընթացը՝ գործառնությունների ավտոմատացման ուղղությամբ: Տարվա ընթացքում ներդրվել է նոր էլեկտրոնային համակարգ, որի միջոցով իրականացվում է փաստաթղթաշրջանառությունը ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև:

ՀՀ կենտրոնական բանկից դուրս կանխիկի ծավալը 2010 թ. աճել է 8.6%-ով, փոփոխվել են առանձին անվանական արժեքներով դրամանիշերի շրջանառության ծավալները:

Վերջին տարիներին ՀՀ ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի տեսակային կառուցվածքում շարունակաբար աճել է 20 000 դրամ անվանական արժեքով թղթադրամի տեսակարար կշիռը, իսկ 2010 թ. վերջինիս ծավալը շրջանառության մեջ ավելացել է 17.0%-ով:

Շարունակվել է 10 000 դրամ և 50 000 դրամ անվանական արժեքով թղթադրամների՝ շրջանառությունում գտնվող ծավալների և դրանց տեսակարար կշիռների նվազման՝ նախորդ տարվա ընթացքում դրսևորված միտումը: Նշենք, որ 2009 - 2010 թթ. 50 000 դրամ անվանական արժեքով թղթադրամների ծավալը շրջանառության մեջ կրկնակի կրճատվել է: Դա մասնավորապես պայմանավորված է 100 000 դրամ անվանական արժեքով թղթադրամի ներդրմամբ: Վերջինիս ծավալը 2010 թ. վերջին կազմել է 14.2 մլրդ դրամ՝ նախորդ տարեվերջի համեմատ ավելանալով 2.4 անգամ:

Մետաղադրամների տեսակային կառուցվածքում էական փոփոխություններ չեն եղել:



ՀՀ կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը 2009-2010 թվականներին

«Արտարժութային հարցերով միջազգային ասոցիացիայի» (International Association of Currency Affairs, IACA), ինչպես նաև «Թղթադրամների միջազգային հանրություն» (International Banknote Society, IBNS) կազմակերպության կողմից կազմակերպված երկու մրցույթներում «Տարվա թղթադրամ» անվանակարգում 100 000 դրամ անվանական

արժեքով թղթադրամը արժանացել է մրցանակների: Նշված մրցանակները շնորհելիս հաշվի են առնվում թղթադրամների համապատասխանությունը բարձր տպագրական ստանդարտներին, արտադրության արդյունավետ գինը, թղթադրամի դիզայնի տարրերի և ժամանակակից պաշտպանական հատկանիշների ներդաշնակ համադրումը, ինչպես նաև գեղարվեստական արժանիքները:



ՀՀ կենտրոնական բանկից դուրս կանխիկի ծավալը 2010 թ. աճել է 8.6%-ով, փոփոխվել են առանձին անվանական արժեքներով դրամանիշերի շրջանառության ծավալները:

Ֆինանսական համակարգի կայունության և զարգացման առաջնահերթությունները 2011 թվականին

- *2011 թվականին Կենտրոնական բանկի կողմից մշակվելու է ճգնաժամերի կառավարման հայեցակարգ, որը կսահմանի ճգնաժամերի կանխարգելման, դրանց կառավարման քաղաքականության նպատակները և տնտեսության վերականգնմանը միտված միջոցառումների իրականացման հիմնական սկզբունքները:*
- *Կշարունակվեն Բազել-3 համակարգի ներդրման նախապատրաստական աշխատանքները, որոնք կներառեն ֆինանսական կայունություն ապահովելու և բանկային համակարգի ռիսկերը զսպելու միջազգայնորեն ընդունված սկզբունքների և պահանջների ներդրումը, մասնավորապես՝ կորպորատիվ կառավարման, իրացվելիության, կապիտալի անբավարար մակարդակի և այլ տիպի ռիսկերի կառավարման մակարդակի բարելավման ուղղությամբ:*
- *Ապահովագրության ոլորտի զարգացման նպատակով 2011 թվականին Կենտրոնական բանկը, Կառավարության հետ համատեղ, կմշակի Հայաստանում բժշկական ապահովագրության զարգացման հայեցակարգը: Այն կներառի նաև առողջապահության ոլորտում տեղեկատվական միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծմանը միտված աշխատանքները, որը հետագայում կդառնա բժշկական ապահովագրության համակարգի կարևորագույն ենթակառուցվածքներից մեկը: Միաժամանակ կշարունակվեն ԱՊՊԱ համակարգի արդյունավետության բարձրացման աշխատանքները:*
- *Վճարահաշվարկային համակարգի զարգացման նպատակով 2011 թվականին Կենտրոնական բանկի կողմից նախատեսվում է իրականացնել «Հիբրիդ վճարային համակարգի» նախագծման աշխատանքներ, ինչը առևտրային բանկերին հնարավորություն կտա իրականացնելու թղթակցային հաշիվների առավել արդյունավետ կառավարում:*
- *Կենտրոնական բանկը ակտիվորեն ընդգրկվելու է կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերի գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի ձևավորման գործընթացում: Մասնավորապես մեծ ուշադրություն է տրվելու ներդրումային ֆոնդերի, դրանց կառավարիչների և կամավոր կենսաթոշակային բաղադրիչի անխափան գործունեության ապահովմանը: Այդ միջոցառումները էապես կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում կապիտալի շուկայի զարգացմանը:*
- *Սպառողների շահերի պաշտպանության և հասարակության տարբեր նպատակային խմբերի ֆինանսական կրթման համատեքստում, 2011 թվականին նախատեսվում են պարտադիր ապահովագրության և կենսաթոշակային բարեփոխումների լուսաբանման միջոցառումներ: Համաշխարհային բանկի կողմից Հայաստանում կիրականացվի սպառողների շահերի պաշտպանության համակարգի գնահատում, ինչը հնարավորություն կտա կատարելագործելու համակարգը:*

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ (ՓԼ/ԱՖ) ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի ներդրման պահից ի վեր իրականացվող աշխատանքները միտված են եղել համակարգի կատարելագործմանը և միջազգային պրակտիկայում կիրառելի չափանիշներին համապատասխանեցմանը: Այս հանգամանքով պայմանավորված՝ ֆինանսական հետախուզության ազգային մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը (այսուհետ՝ ՖԴԿ), համակարգել կամ իրականացրել է մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են եղել Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի 2010-2013 թթ. ազգային ռազմավարությամբ նախանշված նպատակների իրագործմանը: Մասնավորապես, այդ աշխատանքներում մեծ տեղ է հատկացվել ՖԱԹՖ-ի ստանդարտներին լայնորեն համապատասխանող օրենսդրության ներդրմանը, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մեխանիզմների՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ սկզբունքների գործարկմանը, հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց (ֆինանսական հաստատություններ, ոչ ֆինանսական հաստատություններ և անձինք) կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջների հավասար կիրառման ապահովմանը, ներպետական և միջազգային համագործակցության ամրապնդմանն ու ընդլայնմանը և այլն:

2010 թ. ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, կատարվել է Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ ռիսկի ռազմավարական վերլուծություն, որի արդյունքները ներառվել են «ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկի ռազմավարական վերլուծության ամփոփում» վերտառությամբ փաստաթղթում[4]: Վերլուծության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերը հիմնականում կենտրոնացած են ֆինանսական համակարգում՝ հաշվի առնելով դրանում շրջանառող միջոցների ծավալները, ֆինանսական գործարքների լայն տեսականին, անդրազգային գործառնությունների կատարման հնարավորությունները և այլն:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական զարգացումները

Հայաստանի Հանրապետությունում 2008թ-ին ընդունված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային չափանիշներին համապատասխան պահանջներ: Այդու-

[4] *ՀՀ-ում ՓԼ/ԱՖ ռիսկերի մասին առավել մանրամասն տե՛ս http://www.cba.am/am/SitePages/fmcregulation.aspx:*

հանդերձ, Օրենքի երկամյա գործողության ընթացքում ձևավորված պրակտիկ փորձով, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների գնահատումներով վերհանվել են որոշակի թերություններ ու բացեր: Ուստի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրություն ունենալու նպատակով ՖԴԿ-ի կողմից, այլ իրավասու մարմինների մասնագետների ներգրավմամբ մշակվել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթ, որը բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցնելուց հետո ուղարկվել է ՀՀ Կառավարություն:

Բացի այդ, 2010 թ. ընթացքում ԿԲ խորհրդի կողմից ընդունվել են մի շարք մեթոդական ուղեցույցներ, տիպաբանություններ, լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերում:



Վերլուծության արդյունքները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերը հիմնականում կենտրոնացած են ֆինանսական համակարգում:

ՓԼ/ԱՖ ոլորտում կատարված վերլուծությունները և դրանց արդյունքները

Լինելով ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում տեղեկատվություն հավաքագրող, վերլուծություն իրականացնող և տեղաբաշխող ազգային մարմին՝ ՖԴԿ-ն իր իրավասությունների իրականացման նպատակով հաշվետվություններ է ստանում ինչպես հաշվետու անձանցից, այնպես էլ համապատասխան տեղեկություններ է հավաքագրում վերահսկող և այլ մարմիններից: Ստացված տեղեկությունները վերլուծվում են և, ըստ անհրաժեշտության ու պատկանելության, օրենքով սահմանված կարգով, տրամադրվում են իրավապահ կամ վերահսկող մարմիններին:

Իրականացված վերլուծությունների արդյունքում ՓԼ վարկածով իրավապահ մարմիններին տրամադրված տեղեկությունների, դրանց հիման վրա հարուցված ու դատական քննության ներկայացված գործերի, ինչպես նաև կասեցված և/կամ բռնագրավված միջոցների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը 2006-2010թթ. համար ունի հետևյալ տեսքը.

	2006	2007	2008	2009	2010	Ընդամենը
ՖԴԿ կողմից հաղորդումներ իրավապահ մարմիններին	2	11	11	9	23	56
ՖԴԿ հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործեր	2	2	2	1	5	12
ՖԴԿ կողմից իրավապահ մարմիններին տրամադրված տեղեկատվություն	-	13	19	39	53	124
Իրավապահ մարմինների նախաձեռնությամբ հարուցված քրեական գործեր	2	2	5	9	8	26
Ընդամենը հարուցված քրեական գործեր	4	4	7	10	13	38
Կայացված դատավճիռներ	1	0	0	7	3	10
ՀՀ ԿԲ խորհրդի որոշմամբ կասեցված միջոցներ[5]			802000 ԱՄՆ դոլար	1100000 ԱՄՆ դոլար	345000 ՀՀ դրամ, 290000 ԱՄՆ դոլար	
Դատարանի որոշմամբ բյուջե բռնագրավման ենթակա գումարներ (ՀՀ դրամ)[6]	388000	0	0	53824860	514026500	

[5] 2010 թ. կասեցված միջոցներն ամբողջությամբ դրվել են կալանքի տակ:
[6] Բացի աղյուսակում նշված՝ հօգուտ պետական բյուջեի բռնագանձման ենթակա միջոցներից, 2010 թ. փողերի լվացման հիմքով կայացված դատավճռի համաձայն, հօգուտ երրորդ անձի բավարարվել է ևս 502 240 268 ՀՀ դրամի բռնագանձման պահանջ:

ՖԴԿ-ի կողմից իրականացվող վերլուծության ընթացքում անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ հարցումներ կատարել և տեղեկություններ ստանալ ինչպես հաշվետու անձանցից, այնպես էլ ներպետական իրավապահ և վերահսկող մարմիններից, անհրաժեշտության դեպքում՝ նաև օտարերկրյա գործընկերներից: Հարկ է նշել, որ, ՖԴԿ-ի և ներպետական մարմինների միջև համագործակցության արդյունավետության ու օպերատիվության բարձրացման անհրաժեշտությունից ելնելով, իրականացվել են միասնական տեղեկատվական միջավայրի ստեղծման աշխատանքներ, որոնք նախատեսված էին Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2010թթ. միջոցառումների ծրագրով: Միասնական տեղեկատվական միջավայրը շահագրգիռ մարմիններին հնարավորություն կտա անվտանգ կապուղիներով արագ փոխանակել տեղեկատվություն, ինչպես նաև միմյանց հասանելի դարձնել յուրաքանչյուր գերատեսչության տեղեկատվական բազաներում առկա անհրաժեշտ տեղեկությունները:

Միջազգային համագործակցությունը

2010 թ. ընթացքում ՖԴԿ ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի, Եվրասիական խմբի լիագումար նիստերին, ՖԱԹՖ-ի և ՄԵՆԱՖԱԹՖ-ի համատեղ լիագումար նիստին, ՖԱԹՖ-ի և էգմոնտ խմբի փորձագետների համատեղ նիստին, էգմոնտ խմբի աշխատանքային խմբերի և լիագումար նիստերին, ինչպես նաև Վարշավայի կոնվենցիայի համաձայն հիմնադրված Կողմերի համաժողովի նիստին, որտեղ ներկայացրել են ՀՀ շահերը, ինչպես նաև ակտիվորեն մասնակցել են այդ կառույցների կողմից իրականացվող ծրագրերին ու նախաձեռնություններին:

Հաշվետու տարվա ընթացքում միջազգային համագործակցության շրջանակներում կարևորվում է ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ ներկայացված երաշխավորությունների իրականացման ուղղությամբ ՀՀ առաջընթացի հաշվետվության հաստատումը ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից: Առաջընթացի հաշվետվությունում ներառված հիմնարար երաշխավորությունների մասով ՄԱՆԻՎԱԼ-ի քարտուղարության կողմից ներկայացված զեկույցի համաձայն՝ երկիրը շոշափելի առաջընթաց է գրանցել:

Հաշվետու ժամանակահատվածում ՖԴԿ-ն նաև փոխըմբռնման համաձայնագրեր է ստորագրել Իրանի, Սան Մարինոյի և Թաիլանդի Թագավորության ֆինանսական հետախուզության մարմինների հետ: Արդյունքում՝ ՖԴԿ-ն համաձայնագրեր ունի 14 երկրների ՖՀՄ-ների հետ[7]:

[7] *Այդ երկրներն են՝ Ավստրալիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Բելառուս, Բերմուդյան Կղզիներ, Թաիլանդի Թագավորություն, Իրան, Լեհաստան, Կանադա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սան Մարինո, Վրաստան, Ուկրաինա:*

Ուսուցում և խորհրդատվություն

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել են սեմինարներ ու դասընթացներ ինչպես օտարերկրյա գործընկերների, այնպես էլ հաշվետվություն տրամադրող անձանց համար:

2010 թ. մայիսին ՖԴԿ-ի հրավերով Հայաստանի Հանրապետություն է այցելել Իրանի Իսլամական Հանրապետության պատվիրակությունը՝ այդ երկրի ՖՀՄ-ի ղեկավարի գլխավորությամբ:

2010 թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրավերով Հայաստան է այցելել Տաջիկստանի Ազգային բանկի Ֆինանսական դիտարկումների դեպարտամենտի պատվիրակությունը՝ բանկի նախագահի գլխավորությամբ, որի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, երկու երկրների կենտրոնական բանկերի նախագահները քննարկել են ֆինանսական հետախուզության մարմինների համագործակցության ու փոխօգնության հեռանկարները, տեխնիկական օժանդակությանն առնչվող հարցեր: Օտարերկրյա գործընկերների համար ՖԴԿ-ի կողմից կազմակերպվել են նաև սեմինար-քննարկումներ, որի ընթացքում ներկայացվել են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի իրավական, ինստիտուցիոնալ, կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության վերաբերյալ նյութեր:

ՖԴԿ-ի կողմից ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվել են սեմինար-քննարկումներ բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ներդրումային ընկերությունների ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցների համար: ՖԴԿ-ին ԱՄՆ Գանձապետարանի կողմից տրամադրվող տեխնիկական օժանդակության շրջանակներում, հունիս-հուլիս ամիսներին Երևանում սեմինարներ են կազմակերպվել ոչ ֆինանսական հաստատությունների, մասնավորապես՝ հաշվապահական և աուդիտորական ընկերությունների, փաստաբանների, ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի ներկայացուցիչների, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակիցների և ռիելթորական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների, խաղատների և շահումով խաղեր կազմակերպող անձանց, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի մաքսային և հարկային մարմինների աշխատակիցների համար:



ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

2010 թվականին Կենտրոնական բանկում ամբողջությամբ ներդրվեց փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը, որը հնարավորություն տվեց կրճատելու փաստաթղթաշրջանառության հետ կապված վարչական ծախսերը՝ միաժամանակ բարձրացնելով գործընթացի արդյունավետությունը: Համակարգը հնարավորություն է ընձեռում նաև հստակեցնելու ղեկավարության կողմից տրված հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողությունը:

2010 թվականին նաև մշակվել և փորձնական շահագործվել է Կենտրոնական բանկի ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերի, աշխատակիցների անհատական ծրագրերի և դրանց կատարողականների գնահատման էլեկտրոնային համակարգը:

Հաշվետու տարվա ընթացքում Կենտրոնական բանկը միջոցառումներ է իրականացրել Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգի զարգացման և վերջինս միջազգային ստանդարտներին (ISO 27001:2005) համապատասխանեցնելու ուղղությամբ: Այս ստանդարտին համապատասխանեցման ԿԲ հավաստագրումը նախատեսվում է 2011 թ.:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2010 թվականին Կենտրոնական բանկի անձնակազմի կառավարման քաղաքականությունը նպատակաուղղվել է կազմակերպության հիմնական խնդիրների և ռազմավարական ծրագրի իրականացմանը: Կենտրոնական բանկը, կարևորելով աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացումը, ինչպես և նախորդ տարիներին, համապատասխան ռեսուրսներ է հատկացրել աշխատակիցների շարունակական մասնագիտական զարգացումն ապահովելու համար:

Տարեվերջի դրությամբ ԿԲ աշխատակիցների թվաքանակը կազմել է 743՝ 420 կին և 323 տղամարդ, միջին տարիքը՝ 37:

Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետների մասնագիտական գիտելիքները գնահատող կոմիտե

Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետների մասնագիտական գիտելիքները գնահատող կոմիտեի նիստերը գումարվում են Կենտրոնական բանկում երիտասարդ մասնագետի կարգավիճակով աշխատող աշխատակիցների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները ստուգելու և գնահատելու նպատակով: Կոմիտեի որոշումը կրում է խորհրդակցական բնույթ, որի հիման վրա կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները երիտասարդ մասնագետների հետագա կարգավիճակի վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում Կենտրոնական բանկի նախագահին:

2010 թ. գումարվել է հանձնաժողովի 9 նիստ, գնահատվել են 40 երիտասարդ մասնագետներ:

Կենտրոնական բանկի աշխատատեղերի գնահատման հանձնաժողով

Կենտրոնական բանկի աշխատատեղերի գնահատման հանձնաժողովի նպատակն է Կենտրոնական բանկի նոր կամ փոփոխված աշխատատեղերի գնահատումը և դասակարգումը:

Հանձնաժողովը քննարկում է Կենտրոնական բանկում նոր ստեղծվող կամ փոփոխվող աշխատատեղերի գնահատման և դասակարգման հետ կապված խնդիրները և ներկայացնում առաջարկություններ Կենտրոնական բանկի նախագահին: Հանձնաժողովը քննարկում է նաև Կենտրոնական բանկի աշխատակիցների անհատական աշխատանքային ծրագրերի կատարողականների վերաբերյալ վիճահարույց հարցերը:

Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 15-ը:

2010 թ. գումարվել է հանձնաժողովի 6 նիստ:

Կենտրոնական բանկում թափուր հաստիքների համալրումը հիմնականում կատարվել է մըրցութային կարգով. ներքին և արտաքին մրցույթների արդյունքներով համալրվել է 42 աշխատատեղ: Տարվա ընթացքում աշխատանքից ազատվել է 57 աշխատակից:

Կենտրոնական բանկը շարունակել է երիտասարդ մասնագետներ ներգրավելու, նրանց որակավորումը բարձրացնելու և ներուժն օգտագործելու քաղաքականությունը: Ինչպես նախորդ տարիներին, երիտասարդ մասնագետները ընտրվել են առավելապես Ֆինանսաբանկային քոլեջ հիմնադրամի կողմից կազմակերպվող «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» ուսումնական ծրագրի մասնակիցներից: 2010 թվականին Կենտրոնական բանկի գործառութային ստորաբաժանումներում ժամկետային պայմանագրով աշխատել են 54 երիտասարդ մասնագետներ, որոնցից 15-ը համալրել են ԿԲ թափուր աշխատատեղերը:

ՀՀ կենտրոնական բանկում ուսումնական և նախադիպլոմային պրակտիկա է անցել Հայաստանի Հանրապետության բուհերի 61 ուսանող:

Անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացում

2010 թ. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ ուսանողներին խրախուսելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 3 լավագույն ուսանողների հատկացրել է Իսահակ Աբասի Իսահակյանի անվան կրթաթոշակ:

Աշխատակիցների մասնագիտական զարգացումը անձնակազմի արդյունավետ կառավարման անբաժանելի մասն է: 2010 թվականին Կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են մասնագիտական դասընթացների, կառավարչական հմտությունների զարգացմանն ուղղված, ինչպես նաև օտար լեզվի ուսուցման դասընթացների:

Վերապատրաստման ծրագրերը կազմակերպվել են ինչպես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում, այնպես էլ հանրապետության տարածքում գործող ուսումնական կենտրոններում և արտասահմանում:

Արտերկրում կազմակերպված բազմաթիվ վերապատրաստման ծրագրերի, ուսուցողական այցերի առումով մեծ նշանակություն է ունեցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համագործակցությունը գործընկեր կենտրոնական/ազգային բանկերի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Վիեննայի միացյալ ինստիտուտի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ: 2010 թ. արտերկրում կազմակերպվել են վերապատրաստման 162 դասընթացներ, որոնց մասնակցել է ԿԲ 245 աշխատակից: Գործուղված աշխատակիցներն իրենց հաշվետվություններում ներկայացնում են վերապատրաստման արդյունքները, ստացած գիտելիքները և դրանց կիրառման վերաբերյալ առաջարկները:

Հաշվի առնելով ռազմավարական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքների բացը ծածկելու կարևորությունը՝ Կենտրոնական բանկը տեխնիկական աջակցության շրջանակներում պայմանավորվածություններ է ձեռք բերել գործընկեր կենտրոնական բանկերի հետ «հատուկ» դասընթացներ կազմակերպելու վերաբերյալ: 2010 թ. ՀՀ ԿԲ նախաձեռնությամբ կազմակերպվել են 35 «հատուկ» դասընթացներ, որոնք ներառել են ուսուցողական այցեր արտերկիր (25 այց), ինչպես նաև օտարերկրյա փորձագետների այցեր Հայաստանի Հանրապետություն (10 այց): Նշված դասընթացներին մասնակցելու շնորհիվ ՀՀ ԿԲ 238 աշխատակիցներ հնարավորություն են ունեցել զարգացնելու ֆինանսական, մասնավորապես՝ ապահովագրության ոլորտների վերաբերյալ իրենց մասնագիտական գիտելիքները:

Կենտրոնական բանկը շարունակել է երիտասարդ մասնագետներ ներգրավելու, նրանց որակավորումը բարձրացնելու և ներուժն օգտագործելու քաղաքականությունը:



2010 թ. «հատուկ» դասընթացներ իրականացնող գործընկեր կազմակերպություններից ակտիվ համագործակցել է հատկապես Նիդեռլանդների բանկը՝ ՀՀ ԿԲ աշխատակիցների համար կազմակերպելով վերապատրաստման 14 «հատուկ» ծրագիր, որից 5-ը՝ ՀՀ տարածքում: Այդ դասընթացների մասնակից աշխատակիցները ԿԲ վարչության նիստում մանրամասն ներկայացնում են դասընթացի արդյունքները և անում դրանցից բխող առաջարկներ: Անհրաժեշտության դեպքում նշված զեկույցների արդյունքում Կենտրոնական բանկի նախագահի կողմից տրվում են կոնկրետ հանձնարարականներ:

2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկը հյուրընկալել է 2 տարածաշրջանային դասընթաց. ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի հետ համատեղ՝ «Վարկային ռիսկի վերլուծություն» թեմայով և Կանադայի Տորոնտո կենտրոնի կողմից, Համաշխարհային բանկի հետ համատեղ՝ «Նախապատրաստվածություն ճգնաժամին» թեմայով: Դրանց մասնակցել է տարածաշրջանից հրավիրված 40 (29 մասնակից, 11 փորձագետ) հյուր և ՀՀ կենտրոնական բանկի 26 աշխատակից: ՀՀ ԿԲ-ն շարունակել է համագործակցությունը Եվրասիական տնտեսական հանրության հետ: 2010 թվականին Կենտրոնական բանկը Հայաստանում կազմակերպել է երկու դասընթաց Եվրասիական տնտեսական հանրության անդամ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ «Մարդկային ռեսուրսների կառավարում» և «Դրամավարկային քաղաքականություն» թեմաներով: Բացի այդ, փորձի փոխանակման նպատակով, շարունակվել են փոխադարձ գործնական այցերը:

Ֆինանսական կայունության ինստիտուտի իրական ժամանակի ռեժիմով անցկացվող բանկային և ապահովագրության վերահսկողության հեռակա դասընթացներին 2010 թ. մասնակցել է ԿԲ 35 աշխատակից:

Ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում միջազգային մասնագիտական որակավորում ստանալու համար 35 աշխատակիցներ դրական արդյունքներով քննություններ են հանձնել և խրախուսվել:

Կենտրոնական բանկի աշխատակիցների ատեստացիոն հանձնաժողով

Կենտրոնական բանկի աշխատակիցների ատեստացիոն հանձնաժողովի նիստերը գումարվում են՝ ստուգելու համար Կենտրոնական բանկի աշխատակիցների կամ Կենտրոնական բանկում աշխատելու ցանկություն ունեցող անձանց (դիմորդների) մասնագիտական և գործնական կարողություններն ու գիտելիքները:

Հանձնաժողովն աշխատակիցների և դիմորդների մասնագիտական կարողություններն ու գիտելիքները կարող է ստուգել ինչպես հարցազրույցի, այնպես էլ գրավոր աշխատանքների միջոցով:

Կենտրոնական բանկի նախագահը, որը միաժամանակ հանձնաժողովի նախագահն է, հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա կայացնում է որոշում.

- *իր զբաղեցրած աշխատատեղին աշխատակցի մասնագիտական կարողությունների և գիտելիքների համապատասխանության վերաբերյալ,*
- *դիմորդի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ,*
- *դիմորդի առաջխաղացման վերաբերյալ:*

2010 թ. գումարվել է հանձնաժողովի 30 նիստ:

Կարևորելով ղեկավար կազմի և մեծ ներուժ ունեցող աշխատակիցների կառավարչական հմտությունների զարգացումը՝ 2010 թ. Կենտրոնական բանկը կազմակերպել է մի շարք դասընթացներ «Առաջնորդում. ռեսուրսների մոբիլիզացում» և «Կառավարչական հմտությունների զարգացում» թեմաներով:

ՀՀ կենտրոնական բանկի անձնակազմն ակտիվ մասնակցել է նաև Հայաստանի Հանրապետության տարբեր ուսումնական կենտրոնների կողմից կազմակերպված վերապատրաստման ներքին դասընթացներին: 16 դասընթացների մասնակցել է 76 աշխատակից, որից 41-ը՝ անգլերեն լեզվի դասընթացների:

ՀՀ ԿԲ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

2010 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային և օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ:

Հաշվետու տարվա ընթացքում Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի տեխնիկական օժանդակության շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկն ընդունել է ԱՄՀ բանկային վերահսկողության և ֆինանսական գործառնությունների, դրամավարկային քաղաքականության և վիճակագրության բնագավառների առաքելություններին:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են բազմաթիվ ներկայացուցչական միջոցառումների՝ տարեկան հանդիպումների, ֆորումների, բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, կլոր սեղանի նիստերի, խորհրդակցությունների և ցուցահանդեսների, որտեղ հանդես են եկել զեկույցներով և ելույթներով:

Գործնական կապերը ընդլայնելու և բանակցություններ վարելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկ են այցելել Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական առաքելության փորձագետները, GDV գերմանական ապահովագրական ասոցիացիայի փորձագետները, Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների խումբը՝ Հայաստանին փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում տեխնիկական օժանդակության ծրագրի շրջանակներում, Իրանի Իսլամական Հանրապետության՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի պատվիրակությունը, Տաջիկստանի ազգային բանկի պատվիրակությունը՝ նախագահ Շարիֆ Ռախիմզոդայի գլխավորությամբ՝

փորձի ուսումնասիրության նպատակով, Սևծովյան առևտրի և զարգացման բանկի պատվիրակությունը՝ նախագահ Անդրեյ Կոնդակովի գլխավորությամբ և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ կենտրոնական բանկը կազմակերպել է մի շարք գործնական հանդիպումներ, աշխատանքային նիստեր և համաժողով: Հիշատակման են արժանի՝

«Ֆինանսական օմբուդսմենի ինստիտուտը՝ ուղղված հանրության վստահության ամրապնդմանը և ֆինանսական միջնորդության ավելացմանը» թեմայով Հայաստանի ֆինանսական համակարգի հաշտարարի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից համատեղ կազմակերպված միջազգային համաժողովը (Երևան, 2010 թ. ապրիլի 7 - 10):

2010 թ. ընթացքում միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում շարունակվել են կենտրոնական բանկերի հետ համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի ստորագրման աշխատանքները:



ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

2010 թվականին Կենտրոնական բանկը հանրությանը ներկայացրել է մի քանի կարևոր նախաձեռնություններ, որոնք նպատակաուղղված էին Հայաստանի ֆինանսական համակարգը նոր գործիքներով համալրելուն և գործող դաշտի զարգացմանը: Դրա շրջանակներում Հասարակայնության հետ կապերի ծառայության աջակցությամբ իրականացվել են լայնամասշտաբ իրազեկման ծրագրեր՝ կապված Հայաստանում Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի (ԱՊՊԱ) ներդրման լուսաբանման հետ: Ծրագրերի շրջանակներում թողարկվել են բուկլետներ, բացատրական թերթիկներ, կազմակերպվել են ասուլիսներ, ինչպես նաև նկարահանվել է հեռուստատեսային կարճ ֆիլմաշար՝ բաղկացած 8 հոլովակներից, որոնց միջոցով պարզ ու մատչելի ներկայացվում է ԱՊՊԱ գործընթացը: Կենտրոնական բանկը ԱՊՊԱ գործընթացը ներկայացրել է «Հեռանկար», «Ականատես», «Բանաձև», «Ավտոշքերթ» հեռուստահաղորդումների միջոցով: Բացատրական տեսահոլովակներ են հեռարձակվել 4 հեռուստաալիքներով և ռադիոգովազդներ հնչել 6 ռադիոկայաններով:

Կենտրոնական բանկն Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգի (ԱՊՊԱ) վերաբերյալ հանրային իրազեկման շրջանակներում աջակցել է ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միություն» նորաստեղծ կառույցին:

Հասարակայնության հետ կապերի ոլորտում շարունակվել են Կենտրոնական բանկի գործունեության լուսաբանման, հասարակայնությանը ներկայացման և կրթական ծրագրերի կազմակերպման աշխատանքները:

Հասարակայնության տեղեկացմանն ու իրազեկմանն ուղղված քաղաքականության շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկը համագործակցել է Հայաստանի բանկերի միության, Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության, Ապահովագրողների ասոցիացիայի և սպառողների շահերը պաշտպանող կազմակերպությունների հետ:

Հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ ֆինանսական դաշտում գործող կազմակերպությունների ղեկավարների հետ, ներկայացվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական վերահսկողության և ֆինանսական կայունության ապահովման ոլորտում ԿԲ գործողությունները, ծրագրերը, օրենսդրական նախաձեռնությունները: Բան-

կերի ղեկավարներին ներկայացվել են դրամավարկային քաղաքականության ծրագիրը և դրա կատարմանը միտված քայլերը, որոնց վերաբերյալ տարածվել են համապատասխան մամլո հաղորդագրություններ:

Ամսական պարբերականությամբ հրապարակվել են ռեպո (վերաֆինանսավորման) գործառնությունների տոկոսադրույքների մասին ԿԲ խորհրդի որոշումները, որոնց մասին համառոտ հաղորդագրությունները՝ ԿԲ խորհրդում որոշման կայացումից անմիջապես հետո, իսկ 10 օրվա ընթացքում՝ ԿԲ խորհրդի արձանագրությունները:

2010 թ. Կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայությունը կազմակերպել է 14 միջոցառումներ ՁԼՄ-ների մասնակցությամբ: Լրատվամիջոցներից ստացված գրավոր և բանավոր 38 հարցումների տրվել են սպառիչ պատասխաններ: ԿԲ գործունեության լուսաբանման նպատակով թողարկվել են 171 մամլո հաղորդագրություններ: Բացի այդ, ԿԲ խորհրդի նիստերի լուսաբանման վերաբերյալ հրապարակվել են 47, իսկ ռեպո գործառնությունների տոկոսադրույքի մասին՝ 24 հաղորդագրություններ:

Կենտրոնական բանկը 2010 թ-ին նկարահանել է «Մարդկային կապիտալ» ֆիլմը, որը ներկայացնում է Կենտրոնական բանկի առաջին նախագահ Իսահակ Իսահակյանի աշխատանքային գործունեությունը:

Առանձին տեսահոլովակով հանրությանն է ներկայացվել 100.000 դրամանոց թղթադրամը:

Միջազգային ասպարեզում ներկայացուցչական նպատակներով ցուցադրելու համար նկարահանվել է Հայաստանի մասին պատմող կարճ ֆիլմ:

«Այցելուների կենտրոնի» ստեղծման աշխատանքներ են իրականացվել համապատասխան կազմակերպությունների հետ. վերանորոգվել և պատրաստվել է կենտրոնի տարածքը, ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ, վերջնական տեսքի են բերվել ցուցանմուշները, իրականացվել Կենտրոնական բանկի նոր կայքի ստեղծման աշխատանքներ:

2010 թ. շարունակվել են Երևանի և մարզերի դպրոցականների այցելությունները Կենտրոնական բանկ: Նրանց են ներկայացվել ԿԲ գործունեության, հիմնական խնդիրների, փողի և դրամի համառոտ պատմությունը, ցուցադրվել են բացատրական տեսանյութեր: Էքսկուրսիաներին մասնակցել է 1752 մարդ, որից՝ 1613 աշակերտներ, ուսանողներ և 139 ուղեկցող ուսուցիչներ:

Հոկտեմբերի 12 - 22-ը Գյումրու «Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանի» հետ համատեղ Կենտրոնական բանկը կազմակերպել է «Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը» ցուցահանդեսը, որի ընթացքում Շիրակի մարզի մոտ 2000 բնակիչներ (աշակերտներ, ուսուցիչներ, տարբեր ոլորտների մասնագետներ և այլն) ծանոթացել են ազգային դրամի և դրամաշրջանառության պատմությանը, ԿԲ գործունեությանը:

«Տնտեսագիտություն» դասավանդող 13 ուսուցիչների համար Ֆինանսաբանկային քոլեջի հետ համատեղ Աշտարակ քաղաքում նոյեմբերի 15 - 27-ը կազմակերպվել է կրթական սեմինար՝ «Տնտեսագիտություն. տեսություն և կիրառություն» թեմայով:

ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԱՈՒԴԻՏ

ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներքին հսկողությունը ֆինանսական և այլ տիպի հսկողական գործառույթներ ներառող շարունակական (անընդհատ) գործընթաց է, որն իրականացվում է Բանկի խորհրդի, ստորաբաժանումների ղեկավարների և այլ աշխատակիցների կողմից՝ համոզվելու համար, որ.

- իրագործվում են Բանկի առջև դրված խնդիրներն ու նպատակները,
- առկա ռեսուրսներն օգտագործվում են խնայողաբար և արդյունավետ,
- գոյություն ունի առկա տարատեսակ ռիսկերի և ակտիվների պահպանման նկատմամբ համապատասխան հսկողություն,
- Բանկի ղեկավարությանը և հասարակայնությանը ներկայացվող ֆինանսական և այլ տեղեկատվությունն ամբողջական է և արժանահավատ,
- գործունեությունն իրականացվում է գործող օրենսդրությանը, ինչպես նաև Բանկի քաղաքականությանը, ներքին կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան:



2010 թ. ընթացքում շարունակվել է ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառույթներում առկա ռիսկերի բացահայտման, գնահատման և դասակարգման գործընթացը, որի շրջանակներում ներքին հսկողների և ստորաբաժանումների կողմից աշխատանքներ են կատարվել բացահայտված ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ: Աշխատանքների վերաբերյալ ներքին հսկողների կողմից Կենտրոնական բանկի նախագահին հաշվետվություններ են ներկայացվել կիսամյակային և տարեկան կտրվածքով:

Ներքին հսկողությունը ֆինանսական և այլ տիպի հսկողական գործառույթներ ներառող շարունակական (անընդհատ) գործընթաց է:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից տրված հանձնարարականի հիման վրա 2011 թ. նախատեսվում է ուսումնասիրել ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և գործառույթի հետագա զարգացման լուծումներ առաջարկել:

2010 թ. նոյեմբերին Խորհրդի կողմից ընդունվել է ՀՀ կենտրոնական բանկի գործընթացների անընդհատության ապահովման (ԳԱԿ) քաղաքականությունը: Քաղաքականության հաստատումը, ըստ էության, առաջին և ամենակարևոր քայլն է համարվում ՀՀ կենտրոնական բանկում գործընթացների անընդհատության կառավարման համակարգի ներդրման և հետագա կիրառման համար: Համակարգի ներդրման շնորհիվ, նվազեցնելով կամ մեղմացնելով սպառնացող վտանգներն ու դրանց հետևանքները, հնարավոր է դառնում աշխատակիցներին և գործընկերներին ապահովության զգացում հաղորդել՝ դրանով իսկ նպաստելով ՀՀ ֆինանսական համակարգի կայունությանը: Բացի այդ, ԳԱԿ ներդրումը նպաստում է կազմակերպության գործընթացների արդյունավետության և ճկունության մակարդակի բարձրացմանն ու շարունակական կատարելագործմանը:

Հաստատվել են նաև ՀՀ կենտրոնական բանկում գործընթացների անընդհատության ապահովման տեսանկյունից առանցքային համարվող գործընթացների ցանկը և համակարգի ներդրման աշխատանքների ժամանակացույցը:

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառույթն իրականացվում է Վերստուգիչ խմբի կողմից, որը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ձևավորված ստորաբաժանում է: Վերստուգիչ խումբն առաջնորդվում է Ներքին աուդիտորների ինստիտուտի (IIA) Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներով (IPPF) և Ներքին աուդիտորի էթիկայի կանոններով, ինչպես նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների “CobIT”, “VolIT” և “Risk IT framework” փաստաթղթերով:

Վերստուգիչ խմբի աշխատակիցներն անդամակցում են Ներքին աուդիտորների ինստիտուտին (IIA), Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիային (ISACA), Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիային (ACCA), ինչպես նաև հանձնում են միջազգային որակավորման քննություններ (CIA, CISA, ACCA):

Վերստուգիչ խումբը, հիմնվելով Խորհրդի կողմից հաստատված տարեկան ստուգումների ծրագրի վրա, 2010 թ. նպատակային և պարբերական ստուգումներ է իրականացրել, որի արդյունքում գնահատվել և ռիսկերի կառավարման, հսկողության և կառավարչական գործըն-



Վերստուգիչ խմբի ստուգումների արդյունքում ռիսկերի կառավարման, հսկողության և կառավարչական գործընթացների արդյունավետության բարձրացման հնարավոր բարելավման ուղիներ են առաջարկվել:

թացների արդյունավետության բարձրացման հնարավոր բարելավման ուղիներ են առաջարկվել:

Գնահատականը տրամադրվել է ստորև ներկայացված բաղադրիչների վերաբերյալ բավարար հավաստիացումների ձեռքբերման արդյունքում.

- գործընթացների հնարավոր ռիսկերը բացահայտված են, և դրանց կառավարման մեխանիզմները գործունակ են,
- տեղեկատվությունը հուսալի է, արժանահավատ և բավարար՝ թե՛ հաշվետվականության և թե՛ կառավարչական որոշումներ կայացնելու համար,
- գործընթացները արդյունավետ են կազմակերպված, ներդրված հսկողական մեխանիզմները բավարար են և հուսալի,
- իրականացվող գործընթացները համապատասխանում են կանոնակարգող օրենսդրությանը և կարգերին:

Յուրաքանչյուր անկախ հավաստիացման համար ՀՀ ԿԲ խորհրդին և Աուդիտ կոմիտեին ներկայացվել է հաշվետվություն՝ համապատասխան առաջարկություններով:

Աուդիտ կոմիտե

ՀՀ ԿԲ աուդիտ կոմիտեն մասնագիտացված մարմին է և հանդիսանում է Բանկի կառավարման համակարգի կարևոր տարրերից մեկը: Կոմիտեի պարտականությունները ներառում են բանկի ֆինանսական հաշվետվության, ներքին հսկողության, արտաքին և ներքին աուդիտի հետ կապված հարցերն ու խնդիրները:

Աուդիտի կոմիտեն բաղկացած է երեք անդամներից՝ ներառյալ Աուդիտի կոմիտեի նախագահը: Կոմիտեի անդամները Կենտրոնական բանկի խորհրդի անդամներ են:

Տարվա ընթացքում տեղի է ունեցել Կոմիտեի 6 նիստ, քննարկվել և որոշումներ են կայացվել 27 հարցերի վերաբերյալ: Քննարկված հարցերի շրջանակն ընդգրկել է Վերստուգիչ խմբի ստուգումներին, արտաքին աուդիտին վերաբերող աշխատանքներին, ներքին հսկողությանը և ռիսկերի կառավարման համակարգին, Վերստուգիչ խմբի ընթացիկ գործունեությանն ու ոլորտին վերաբերող մասնագիտական խնդիրներ:

2010 թ. ընթացքում Վերստուգիչ խումբը շարունակել է ակտիվ համագործակցել գործընկեր բանկերի (Գերմանիայի Բունդեսբանկ, Լիտվայի բանկ, Նիդեռլանդների բանկ) և Արժույթի միջազգային հիմնադրամի հետ:

2010 թ. Վերստուգիչ խմբում տեղի են ունեցել կադրային փոփոխություններ: Խմբի աշխատանքներում ներգրավվել են ինչպես ներքին աուդիտի, այնպես էլ ֆինանսական ոլորտի այլ բնագավառներում հարուստ աշխատանքային փորձ ունեցող, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառում միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից որակավորված մասնագետներ:

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկ

Տարեկան ֆինանսական հաշվետվություն

2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	62
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	64
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	65
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	67
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	68
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	71

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունները 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և անկախ աուդիտորի եզրակացությունը

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Բանկ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի պատասխանատվությունը

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ անցկացված աուդիտի հիման վրա եզրակացություն արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նա-

խագծելու, սակայն ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով:

Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրենության կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունն արտահայտելու համար:


Եզրակացություն

Մեր կարծիքով՝ ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր



Դանիել Հիլեր
Աուդիտի ղեկավար/բաժնետեր



Գրանթ Թորնթոն ՓԲԸ
01 ապրիլի 2011 թ.
ք. Երևան

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T +374 10 260 964
F +374 10 260 961
www.gta.am

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2010 թ. դեկ. 31-ին ավարտված տարվա համար	2009 թ. դեկ. 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային եկամուտ	4	9,534,614	8,862,492
Տոկոսային ծախս	5	(16,652,276)	(13,475,140)
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս)		**(7,117,662)**	**(4,612,648)**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		61,399	116,562
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(438,138)	(400,522)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ ծախս		**(376,739)**	**(283,960)**
Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	6	(11,962,463)	36,575,523
Զուտ իրացված օգուտ/(վնաս) վաճառքի համար մատչելի ակտիվների գծով		(21,168)	33
Զուտ օգուտ՝ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	7	2,943,175	5,652,878
Այլ եկամուտ	8	1,901,653	709,679
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	9	(226,802)	(1,236,314)
Ընդհանուր վարչական ծախսեր	10	(13,061,942)	(6,823,054)
Տարվա շահույթ/(վնաս), այդ թվում		**(27,921,948)**	**29,982,137**
Այլ համապարփակ եկամուտ			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ վնաս		(600,218)	(1,250,645)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ վնաս		385,558	-
Ընդամենը՝ տարվա համապարփակ եկամուտ		**(28,136,608)**	**28,731,492**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2010 թ.դեկ. 31-ի դրությամբ	2009 թ. դեկ. 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ակտիվներ արտարժույթով			
Դրամական միջոցներ		7,552,047	7,776,292
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	11	158,102,101	221,678,070
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	12	404,632,917	459,234,675
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	13	917	917
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	13	95,678,521	25,171,087
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	14	63,670,237	101,621,324
Այլ ակտիվներ		874,492	666,956
		730,511,232	816,149,321
Ակտիվներ տեղական արժույթով			
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	15	70,615,499	70,735,139
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	13	88,705,765	121,204,193
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	13	4,132,916	3,862,867
Հիմնական միջոցներ	16	26,312,189	15,762,787
Ոչ նյութական ակտիվներ	17	583,179	427,907
Այլ ակտիվներ	18	3,752,261	2,451,325
		194,101,809	**214,444,218**
Ընդամենը՝ ակտիվներ		**924,613,041**	**1,030,593,539**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	19	99,650,034	150,616,174
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	22	3,989,112	1,329,188
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		19,478	36,588
Պարտավորություններ ԱՄՀ հանդեպ	14	82,284,509	92,263,527
Այլ փոխառություններ	20	27,599,809	28,309,397
Այլ պարտավորություններ		146,096	206,504
		213,689,038	275,761,378

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծանոթագրություն	2010 թ. դեկ. 31-ի դրությամբ	2009 թ. դեկ. 31-ի դրությամբ
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		348,164,734	320,669,631
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	19	80,825,771	53,204,221
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	22	106,545,573	177,194,796
Պարտավորություններ ԱՄՀ հանդեպ	14	195,802,721	172,556,583
Այլ պարտավորություններ	21	1,353,894	853,302
		732,692,693	724,478,533
Ընդամենը՝ պարտավորություններ		**946,381,731**	**1,000,239,911**
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	23	100,000	100,000
Գլխավոր պահուստ	23	17,389,049	11,392,622
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	13	85,663,194	85,663,194
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ		(1,628,760)	(1,414,100)
Կուտակված վնաս		(123,292,173)	(65,388,088)
Ընդամենը սեփական կապիտալ		**(21,768,690)**	**30,353,62**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**924,613,041**	**1,030,593,539**

64 -119-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2011 թ. ապրիլի 1-ին ՀՀ ԿԲ խորհրդի կողմից և վերջինիս անունից ստորագրվել:

Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
Նախագահ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

	Լրացուցիչ @ողովրդի գծով	Վերադասման տարբերություն	Լրացուցիչ դրամավարկային չհիմնադրամ	Ընդհանուր համալիր եկամուտ-ի վերաբերյալ մեկ այլ տարբերություն	Ոսկի գծով	Լրացուցիչ @ողովրդի գծով
Հաշվեկշիռը 2009 թ. հունվարի 1-ի դրությամբ	**100,000**	**9,870,486**	**85,663,194**	**(163,455)**	**(87,814,615)**	**7,655,610**
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	1,522,136	-	-	(1,522,136)	-
Մասհանումներ ՀՀ Կառավարությանը	-	-	-	-	(6,033,474)	(6,033,474)
		1,522,136	-	-	(7,555,610)	(6,033,474)
Տարվա շահույթ	-	-	-	-	29,982,137	29,982,137
Այլ համապարփակ եկամուտ						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ վնաս	-	-	-	(1,250,645)	-	(1,250,645)
Ընդամենը՝ տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	(1,250,645)	29,982,137	28,731,492
Մնացորդը 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**100,000**	**11,392,622**	**85,663,194**	**(1,414,100)**	**(65,388,088)**	**30,353,628**
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	5,996,42	-	-	(5,996,427)	-
Մասհանումներ ՀՀ Կառավարությանը	-	-	-	-	(23,985,710)	(23,985,710)
		5,996,427			(29,982,137)	(23,985,710)
Տարվա վնաս	-	-	-	-	(27,921,948)	(27,921,948)
Այլ համապարփակ եկամուտ						
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ վնաս	-	-	-	(600,218)	-	(600,218)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ վնաս	-	-	-	385,558	-	385,558
Ընդամենը՝ տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	(214,660)	(27,921,948)	(28,136,608)
Մնացորդը 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**100,000**	**17,389,049**	**85,663,194**	**(1,628,760)**	**(123,292,173)**	**(21,768,690)**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2010 թ. դեկ. 31-ին ավարտված տարվա համար	2009 թ. դեկ. 31-ին ավարտված տարվա համար
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Տարվա շահույթ/ (վնաս)		(27,921,948)	29,982,137
Մաշվածություն և ամորտիզացիա		731,035	437,166
Հիմնական միջոցների վաճառքից վնաս		5,302	21,819
Ստացվելիք տոկոսներ		577,853	257,752
Վճարվելիք տոկոսներ		657,448	(1,386,963)
Զուտ (օգուտ)/վնաս դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից		12,099,588	(22,597,494)
Զուտ վնաս իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից		1,939,306	986,939
Այլ		(32)	4,662
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		(11,911,448)	7,706,018
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ		882,671	(5,913,005)
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		26,185,644	(105,152,819)
ԱՄՀ-ի ակտիվներ		23,797	(131,830)
Վաճառքի համար մատչելի ակտիվներ		8,298,058	(31,438,018)
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ		(67,685,078)	(30,139,431)
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր		(30,946)	9,990,494
Այլ ակտիվներ		(1,421,373)	(710,326)
Գործառնական պարտավորությունների աճ/ (նվազում)			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		27,495,103	(23,833,600)
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և մնացորդներ		(16,270,879)	68,023,915
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ		33,178,784	97,095,654
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ		(68,085,395)	74,023,577
Թողարկված պարտքային արժեթղթեր		-	(1,437,498)
Այլ պարտավորություններ		190,940	(5,526,135)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**(69,150,121)**	**52,556,996**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(11,446,498)	(6,018,475)
Հիմնական միջոցների վաճառք		5,487	3,340
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		(11,441,011)	(6,015,135)

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Վարկերի ստացում/ (մարում) KFW-ից		1,765,734	11,986,838
Վարկերի ստացում/(մարում) ԱՄՀ-ից		(7,742,999)	45,291,623
Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		**(5,977,265)**	**57,278,461**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**(86,568,397)**	**103,820,322**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին		236,032,987	63,679,345
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(9,967,062)	68,533,320
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվերջին	26	**139,497,528**	**236,032,987**
Լրացուցիչ տեղեկատվություն			
Ստացված տոկոսներ		8,956,761	8,604,741
Վճարված տոկոսներ		(17,309,724)	(14,862,104)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Նախապատմություն

Հիմնական գործունեությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետության օրենքով հիմնադրված իրավաբանական անձ է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6: 2010 թվականին Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 728 (2009 թ.՝ 681):

Բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է, որն իրականացվում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Ի լրումն հիմնական խնդրի՝ Բանկը պատասխանատու է.

- Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման և
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Բանկը նաև՝

- թողարկում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը և կարգավորում դրամաշրջանառությունը,
- կազմակերպում և կարգավորում է փողերի «լվացումը» և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումները,
- Հայաստանի Հանրապետության Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,
- լիցենզավորում է առևտրային բանկերին և, եթե նախատեսված է օրենքով՝ այլ անձանց, և վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատու է, ինչպես նաև
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները:

Բանկի դուստր ընկերությունները ներկայացված են ստորև

Անվանումը	Հիմնադրման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող %		Հիմնադրման ամսաթիվ
			2010 թ.	2009 թ.	
«Արմենիան Քարդ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	66	66	մարտ 2000 թ.
«Հայինկասացիա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Դրամ. միջոցների փոխադրումներ	100	100	ապրիլ 1998 թ.
Համահայկական բանկ	Հայաստանի Հանրապետություն	Բանկային գործունեություն	100	100	դեկտեմբեր 2009 թ.
«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային գործունեություն	100	100	հունիս 2009 թ.
«Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկավորման գործունեություն	100	-	փետրվար 2010 թ.
«Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկավորման աջակցություն	100	-	դեկտեմբեր 2010 թ.

Բանկը նաև ներդրումներ է կատարել «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամում», որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թ. փետրվարի 4-ի որոշմամբ:

Հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, որի հիմնադրման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության և հուսալիության ապահովումն է ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու միջոցով:

Ֆինանսական կայունության ապահովմանն ուղղված միջոցառումներ

Բանկն ունի կարևոր դերակատարություն համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա առավել կառավարելի դարձնելու գործում՝ ելնելով հիմնարար խնդրից և պատասխանատվությունից՝ պահպանելու և խրախուսելու Հայաստանի ֆինանսական համակարգի կայունությունը: Այդ նպատակին հասնելու համար Բանկը ձգտում է կանխարգելել ճգնաժամի անցանկալի ազդեցությունները՝ օգտագործելով իր տրամադրության տակ եղած բոլոր ֆինանսական գործիքները:

Հաշվի առնելով Հայաստանի բանկային համակարգի կապիտալացման և իրացվելիության բարձր մակարդակը՝ 2009 թ. մարտի 3-ին Բանկը որոշում կայացրեց արտարժույթի շուկայում սահմանափակել միջամտությունները և վերադառնալ լողացող փոխարժեքի քաղաքականությանը: Վերջինս թույլ կտա արտարժույթի փոխարժեքները ձևավորվելու ներկա մակրոտնտեսական հիմնարարներին համապատասխան, ինչը զգալիորեն կբարելավի Հայաստանի արտաքին մրցունակությունը:

2. Պատրաստման հիմունքներ

2.1. Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից, և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

2.2. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

2.3. Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը նաև Բանկի ֆունկցիոնալ արժույթն է և այն արժույթը, որով ներկայացված են սույն ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալի դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Դուստր ընկերությունների համախմբում

Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները չեն համախմբվել Բանկի ֆինանսական հաշվետվություններում, քանի որ համախմբումն էական ազդեցություն չէր ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ըստ բանկի կողմից ընդունված վերանայված քաղաքականության:

Դուստր ընկերություններում ներդրումներն էական են Կենտրոնական բանկի համար, եթե գործում է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

ա) դուստր ընկերության զուտ ակտիվներում Բանկի բաժնեմասը գերազանցում է Բանկի ընդհանուր ակտիվների 1%-ը,

բ) Բանկի բոլոր դուստր ընկերությունների զուտ ակտիվներում Բանկի բաժնեմասերի հանրագումարը գերազանցում է Բանկի ընդհանուր ակտիվների 5%-ը,

գ) հաշվետու ժամանակաշրջանում դուստր ընկերության եկամուտներում և ծախսերում Բանկի բաժնեմասը գերազանցում է Բանկի եկամուտների և ծախսերի 3%-ը,

դ) Բանկի բոլոր դուստր ընկերությունների եկամուտներում և ծախսերում Բանկի բաժնեմասերի հանրագումարը գերազանցում է համապատասխանաբար Բանկի եկամուտների և ծախսերի 5%-ը,

ե) Բանկի խորհրդի որոշմամբ՝ նաև այլ դեպքերում:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը արժեթղթերը դասակարգում է որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

2.5. Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

2.6. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն ընդունել է իր գործունեությանը համապատասխան և 2010 թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի («ՀՀՄՍԽ») և ՀՀՄՍԽ-ի Հաշվետվությունների Մեկնաբանման Հանձնաժողովի («ՀՄՀ») կողմից:

Այն ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք ունեցել են ազդեցություն Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, ներկայացված են ստորև.

ՖՀՄՍ 5 (Փոփոխություն) *«Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատվող գործառնություններ»*

Փոփոխությունը պարզաբանում է, որ ՖՀՄՍ 5-ը և այն ՖՀՄՍ-ները, որոնք հատկապես վերաբերում են վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներին և ընդհատվող գործառնություններին, ներկայացնում են այդ ակտիվներին և գործառնություններին վերաբե-

րող բոլոր բացահայտումները: ՖՀՄՍ 5 (Փոփոխություն)-ը կիրառվում է 2010 թ. հունվարի 1-ից և այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 1 (Փոփոխություն) *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»*

Փոփոխությունը պարզաբանում է այն պարտավորության դասակարգումը, որը կարող է, երկրորդ կողմի ընտրությամբ, մարվել կազմակերպության կապիտալ գործիքների թողարկմամբ: ՀՀՄՍ 1 (Փոփոխությունը) կիրառվում է հետընթաց՝ 2010 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 7 (Փոփոխություն) *«Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն»*

Փոփոխությունը մանրամասնորեն պարզաբանում է, որ որպես ներդրումային գործունեությունից դրամական հոսք կարող է դասակարգվել միայն այն ծախսը, որի արդյունքում ակտիվ է ճանաչվում: ՀՀՄՍ 7 (Փոփոխությունը) կիրառվում է հետընթաց՝ 2010 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 36 (Փոփոխություն) *«Ակտիվների արժեզրկում»*

Փոփոխությունը պարզաբանում է, որ ՀՀՄՍ 36-ով գուդվիլը դրամահավաք միավորներին փոխանցելու նպատակով թույլատրված ամենամեծ միավորը ՖՀՄՍ 8-ով սահմանված գործառնական սեգմենտն է՝ նախքան հավաքագրումը, ինչպես թույլատրված է այդ ստանդարտով:

ՀՀՄՍ 36 (Փոփոխություն) *կիրառվում է 2010 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

ՀՀՄՍ 39 (Փոփոխություն) *«Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում»*

- նպատակ ունի պարզաբանել՝ արդյո՞ք ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող կանխավճարային օպցիոնները, որոնցում գործող գինը ներառում է վարկի վաղ վերադարձելիության համար տուգանք, համարվում են բուն պայմանագրի անբաժան մասը,
- նպատակ ունի պարզաբանել, որ ՀՀՄՍ 39.2 (գ)-ով սահմանվող բացառությունը կիրառելի է միայն գնորդի և վաճառող բաժնետիրոջ միջև գնվող կազմակերպության առքի կամ վաճառքի ֆորվարդային պայմանագրերի համար, որը հետագա ձեռքբերման ժամանակ կհանգեցնի բիզնեսի միավորման,
- պարզաբանում է, թե որ դեպքերում հեջավորման գործիքներից օգուտներն ու վնասները պետք է վերադասակարգվեն սեփական կապիտալից շահույթի կամ վնասի հաշվին՝ որպես վերադասակարգման ճշգրտում:

ՀՀՄՍ 39 (Փոփոխություն) *կիրառվում է 2010 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

2.7. Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվանից հետո առաջիկա ժամանակաշրջանում: Այս պահին, ղեկավարության գնահատմամբ, դրանց հնարավոր ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա էական չի կարող լինել:

ՀՀՄՍ 32 (Փոփոխություն) *«Ֆինանսական գործիքներ-ներկայացում» – թողարկված իրավունքների դասակարգում,*

ՖՀՄՄԿ (IFRIC)19. *Ֆինանսական պարտավորությունների մարումը կապիտալի գործիքներով,*

ՖՀՄՍ 7 (փոփոխություններ) *Ֆինանսական ակտիվների փոխանցում,*

ՀՀՄՍ 24 (վերափոխված) *Կապակցված կողմերի բացահայտում,*

ՖՀՄՍ 9 *Ֆինանսական գործիքներ*

2.8. Տարեկան բարեփոխումներ 2010 թ. համար (ուժի մեջ է մտել 2010 թ. հուլիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո)

ՀՀՄՍԽ-ն թողարկել է 2010 թվականի *ՖՀՄՍ բարեփոխումները*: Այս փոփոխությունների մեծ մասը ուժի մեջ է մտնում 2010 թ. հուլիսի 1-ին կամ 2011 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: 2010 թ. բարեփոխումները փոփոխում են որոշ դրույթներ ՖՀՄՍ1, ՖՀՄՍ 3Վ, ՖՀՄՍ 7, ՀՀՄՍ1, ՀՀՄՍ 27, ՀՀՄՍ 34 և ՖՀՄՍՄԿ13-ում: Բանկի առաջնային գնահատումները ցույց են տալիս, որ 2010 թ. փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, բացառությամբ ֆինանսական գործիքների բացահայտման պահանջների, որոնք մեղմացնում են բացահայտման ենթակա հետևյալ պահանջները.

- ֆինանսական ակտիվների մնացորդային արժեքները, որոնք այլ կերպ կլինեին ժամկետանց կամ արժեզրկված, որոնց ժամկետները վերանայվել են,
- վարկային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական գործիքների համար, որոնց մնացորդային գումարը լավագույնս է ներկայացնում վարկային ռիսկի առավելագույն չափը,
- ժամկետանց կամ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով վերցրած գրավների իրական արժեքի գնահատումը և նկարագրությունը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն, բացառությամբ դուստր ընկերությունների համախմբման:

3.1. Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով, փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Արտարժույթով արտահայտված՝ վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են կապիտալում:

Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես, օրինակ, վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31-ը դեկտեմբերի 2010	31-ը դեկտեմբերի 2009
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	363.44	377.89
ՀՀ դրամ/1 եվրո	481.16	542.23
ՀՀ դրամ/1 ՀՓԻ	559.71	592.41

3.2. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում դրամական միջոցները և առևտրային բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Հատուկ փոխառության իրավունքով արտահայտված ակտիվները:

3.3. Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետգնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում է ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ) կամ
- սկզբնական ճանաչման պահին կազմակերպության կողմից նախատեսվում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանան, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեն առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեն ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես, օրինակ, կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնց տարբերությունը էականորեն ազդում է դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները ներկայացվում են որպես պարտավորություն:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը հաստատագրված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին՝ բացառությամբ նրանց, որոնք տրամադրվում են անմի-

ջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ, նրանց, որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կամ նրանց, որոնց տիրապետողը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաստատագրված կամ որոշելի վճարումներով և հաստատագրված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների.

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ակտիվներն այնպիսի ֆինանսական ակտիվներ են, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կարգավորվող ձևի» գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով գործարքի ամսաթվի և վերջնահաշվարկի ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում իրական արժեքի փոփոխությունները էական չեն:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ ստանձնմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները՝ ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված

ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- սեփական կապիտալի գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Վերջիններս չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի վերադասակարգումը չի բավարարում ապաճանաչման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը՝ ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3.4. Իրական արժեքի չափման հիմունքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինն առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնորոշման մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են ղեկավարության գնահատականի վրա, իսկ զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Բորսաներում չշրջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Բանկը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

3.5. Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ՝

- իրական արժեքով չափվող, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, գործիքների խմբում դասակարգված ֆինանսական գործիքների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության միջոցով (բացառությամբ արժեզրկումից կորուստների և փոխարժեքային տարբերություններից շահույթի ու վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է, և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ստացվելու ժամանակ ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվարկվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկման միջոցով:

3.6. Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրացել է, կամ երբ Բանկը փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում է:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.7. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.8. Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որոնց դեպքում արժեթղթերն արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռում և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ այլ բանկերի կամ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ռեպո պայմանագրի գործողության ընթացքում:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես բանկերից կամ հաճախորդներից ստացվելիք գումարներ: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսագումար և հաշվեգրվում է հակադարձ ռեպո պայմանագրի գործողության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3.9. Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է հաշվեկշռում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները՝ կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռք բերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով՝ որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

3.10. Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները հաշվապահական հաշվեկշռում ար-

տացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն տիրապետողի հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն տարում, որի ընթացքում կատարվել են:

3.11. Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Մետաղադրամների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերությունը ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս:

3.12. Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում կամ վնասում:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ճանաչման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վեր-

ջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

	2010	2009
Շենքեր	30-50 տարի	30-50 տարի
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	5-15 տարի	5-8 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի	5 տարի
Այլ	2-15 տարի	2-10 տարի

3.13. Ոչ նյութական ակտիվներ

Բանկի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Բանկը 2009 թ. վերանայել է ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները: Ըստ Բանկի գնահատումների՝ Բանկի կողմից օգտագործվող համակարգչային ծրագրերի օգտակար ծառայությունների ժամկետները անորոշ են: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են՝ հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

3.14. Արժեզրկում

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են հաճախորդներին տրված վարկերը, այլ դեբիտորական պարտքերը և չգնահատված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբը ունի զգալի ֆինանսական դժվարություն-

ներ, առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ:

Նախ և առաջ Բանկը գնահատում է՝ արդյոք գոյություն ունի՞ արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին-առանձին այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար՝ լինի դա զգալի, թե՝ ոչ, ապա այդ վարկը ներառվում է պարտքային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում, և կատարվում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման դիտարկում և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, չեն ներառվում արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի՝ ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերություն: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և անցյալի փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա, դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմքն են:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի, և Բանկի տրամադրության տակ կան ոչ բավարար տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարը Բանկը գնահատում է՝ ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվներում ընդգրկված սեփական կապիտալի չգնահատված գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանա-

հավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարն իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ենթակա չեն հակադարձման:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը, և օգտագործման արժեք: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.15. Կենսաթոշակներ

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերում են:

3.16. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազ-

դեցությունն էական է, ապա պահուստները որոշվում են՝ ակնկալվող դրամական հոսքերը զեղչելով զեղչման՝ մինչև հարկումը գործող այն դրույքի կիրառմամբ, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի՝ շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

3.17. Հարկում

Բանկն ազատված է բոլոր տեսակի հարկերից, բացառությամբ ներկրվող ապրանքների համար Հայաստանի Հանրապետության սահմանին գանձվող հարկերի, տուրքերի և մաքսային վճարների: Միաժամանակ, Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.18. Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես՝ հաշվի առնելով ակտիվի/պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը կամ կիրառելի լողացող տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են զեղչի կամ հավելավճարի կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ենթակա գումարի միջև այլ տարբերությունների ամորտիզացիան, որը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա:

Տոկոսային եկամուտը, որը վերաբերում է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներին, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ներառվում է այն շահույթի կազմում, որը ստացվել է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկային կազմակերպությունների, վարկերի սպասարկման և այլ վճարները, որոնք հարակից ուղղակի ծախսերի հետ դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3.19. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը ճանաչվում է համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

4. Տոկոսային եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Տոկոսային եկամուտ՝ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Ժամկետային ավանդներ	1,834,407	2,342,707
Մինչև մարումը պահվող ակտիվներ	138,829	5,346
Նոստրո հաշիվներ	37,312	101,606
Օվերնայթ	211,531	171,419
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	60,756	47,485
Այլ եկամուտներ	-	191
	2,282,835	**2,668,754**
Տոկոսային եկամուտ՝ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով		
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	4,632,789	4,147,550
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	2,305,423	2,011,754
Մինչև մարումը պահվող ակտիվներ	270,049	12,867
Այլ	43,518	21,567
	7,251,779	**6,193,738**
	9,534,614	**8,862,492**

5. Տոկոսային ծախս

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Տոկոսային ծախս՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
ԱՄՀ-ից ստացված վարկ	2,571,362	1,932,096
Այլ փոխառություններ	204,348	187,820
Այլ պարտավորություններ	17,320	40,450
	2,793,030	**2,160,366**
Տոկոսային ծախս՝ տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,502
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	13,487,074	11,085,891
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	313,078	174,045
Այլ պարտավորություններ	59,094	50,336
	13,859,246	**11,314,774**
	16,652,276	**13,475,140**

6. Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Զուտ օգուտ/(վնաս) դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	(12,099,588)	22,597,494
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	137,125	13,978,029
	(11,962,463)	**36,575,523**

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված զուտ վնասի կազմում ներառված է 24,501,164 հազար դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից զուտ վնասը իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (2009 թ.՝ 16,312,104 հազար դրամ զուտ օգուտ):

2009 թ. մարտի 3-ին Բանկը որոշում կայացրեց սահմանափակել արտարժույթի շուկայում միջամտությունները և վերադառնալ լողացող փոխարժեքի քաղաքականությանը: Այս փոփոխությունը (մեկ օրվա ընթացքում ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 21.7%-ով) դրական ազդեցություն ունեցավ Բանկի 2009 թ. ֆինանսական վիճակի վրա, քանի որ Բանկի միջազգային պահուստները պահվում են արտարժույթով: Լողացող փոխարժեքի անցման արդյունքում դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից Բանկի մեկ օրվա ընթացքում ստացած զուտ օգուտը կազմեց 44,393,817 հազար դրամ: 2010 թվականի ընթացքում ՀՀ դրամը արժևորվեց ԱՄՆ դոլարի նկատմամբ 4%-ով:

7. Զուտ օգուտ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Զուտ օգուտ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով (բացի արտարժույթի վերագնահատումից)*	236,469	912,737
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող օտարերկրյա արժեթղթերի գծով (բացի արտարժույթի վերագնահատումից)*	6,599,921	6,865,918
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքների գծով	11,126	16,621
Զուտ վնաս սեփական կառավարման ներքո ֆյուչերսային պայմանագրերի գծով (բացի արտարժույթի վերագնահատումից)*	(3,772,380)	(2,007,673)
Հավատարմագրային կառավարման գծով վճարներ (բացի արտարժույթի վերագնահատումից)*	(131,961)	(134,725)
	2,943,175	**5,652,878**

** Նշված ֆինանսական գործիքների գծով արտարժույթի վերագնահատման արդյունքը ներառված է «Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից» հոդվածում (տես ծանոթ. 6):*

8. Այլ եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Եկամուտ դրամագիտական արժեքների վաճառքից	409,278	439,736
Այլ եկամուտ	1,492,375	269,943
	1,901,653	**709,679**

9. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Թղթադրամների և մետաղադրամների թողարկման ծախսեր	1,366	989,302
Դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր	225,436	247,012
	226,802	**1,236,314**

10. Այլ ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ	4,139,441	4,013,165
Ներդրումներ հիմնադրամներում	5,500,000	-
Պահուստների անվտանգություն և սպասարկում	729,718	736,885
Մաշվածություն և ամորտիզացիա	731,035	437,166
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	569,417	361,319
Մասնագիտական ծառայություններ	240,330	181,164
Այլ	1,152,001	1,093,355
	13,061,942	**6,823,054**

11. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

հազար ՀՀ դրամ

	2009	
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Ժամկետային ավանդներ	37,385,870	34,009,997
Նոստրո հաշիվներ	119,776,198	181,157,023
Հաշվեգրված տոկոսներ ավանդների և նոստրո հաշիվների գծով	36,169	57,280
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	89,668	259,484
Ստացվելիք գումարներ	814,196	6,194,286
	158,102,101	**221,678,070**

Բանկերում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2010 թ. և 2009 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ տեղաբաշխված միջոցներ 3 բանկերում, որոնցից յուրաքանչյուրի մնացորդները գերազանցում էին բանկերում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում էր 135,063,346 հազար ՀՀ դրամ (2009 թ.՝ 211,234,506 հազար ՀՀ դրամ):

2009թ. ընթացքում Բանկը ՀՀ առևտրային բանկերին տրամադրել և միաժամանակ նրանցից ստացել է կարճաժամկետ ավանդներ տարբեր արժույթներով (նշված գումարները ներառված են ստացվելիք գումարներ հոդվածում): 31.12.09թ. դրությամբ Բանկը տրամադրել է 10 000 հազար ԱՄՆ դոլար գումարի ավանդ, ինչի դիմաց

ՀՀ նույն բանկից ստացված ՀՀ դրամով ավանդը ներառված է 19 ծանոթագրությունում: 2010 թվականին Բանկը կարճաժամկետ ավանդային պայմանագրեր չունի:

12. Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Ակտիվներ		
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ-Գնանշված		
Արտերկրյա արժեթղթեր սեփական կառավարման ներքո	358,460,805	415,401,592
Արժեթղթեր հավատարմագրային կառավարման ներքո	42,465,054	43,758,444
Փողի շուկայի գործիքներ սեփական կառավարման ներքո	3,645,519	-
	404,571,378	**459,160,036**
Ածանցյալ ֆինանսական գործիքներ-Գնանշված		
Պայմանագրեր արտարժույթով՝ սեփական կառավարման ներքո	61,539	74,639
	404,632,917	**459,234,675**

Սկզբնական ճանաչման պահին պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքները Բանկի կողմից նախատեսվել են որպես ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սեփական կառավարման ներքո գտնվող իրական արժեքով չափվող արտերկրյա արժեթղթերը իրենցից ներկայացնում են.

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Պետական արժեթղթեր	249,225,131	225,002,788
Պետության կողմից ուղղակի/անուղղակի երաշխավորված արժեթղթեր	40,569,775	148,010,416
Այլ արժեթղթեր	68,665,899	42,388,388
Ընդամենը	**358,460,805**	**415,401,592**

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերը իրենցից ներկայացնում են.

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Արտերկրյա կառավարությունների պարտքային արժեթղթեր	32,032,674	26,607,627
Արտերկրյա ֆինանսական հաստատությունների արժեթղթեր	10,432,380	17,150,817
Ընդամենը	**42,465,054**	**43,758,444**

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերը իրենցից ներկայացնում են օտարերկրյա ֆինանսական հաստատությունների կողմից իրենց հայեցողությամբ կառավարվող ակտիվներ: Բանկի կողմից սահմանվել են ռիսկերին ենթարկվածության սահմանաչափեր և ներդրումային ուղեցույցներ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

հազար ՀՀ դրամ

	Անվանական արժեք		Իրական արժեք			
	2010	2009	2010		2009	
			Ակտիվ	Պարտավորություն	Ակտիվ	Պարտավորություն
Արտարժութային ֆյուչերսներ հավատարմագրային կառավարման ներքո	12,263,252	14,806,747	-	19,478	-	36,588
Արտարժութային ֆյուչերսներ սեփական կառավարման ներքո	467,176,740	1,136,105,882	61,539	-	74,639	-
Ընդամենը	**479,439,992**	**1,150,912,629**	**61,539**	**19,478**	**74,639**	**36,588**

13. Ներդրումային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Վաճառքի համար մատչելի ներդրումներ արտարժույթով		
Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով – Չգնահատվող		
SWIFT	917	917
Վաճառքի համար մատչելի ներդրումներ տեղական արժույթով		
Պարտքային և հաստատագրված եկամտով գործիքներ		
ՀՀ Կառավարության պետական գանձապետական արժեթղթեր	12,124,141	25,936,859
ՀՀ Կառավարության մուրհակ	55,644,010	79,629,720
	67,768,151	**105,566,579**
Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով – Չգնահատվող		
Ներդրումներ չհամախմբված դուստր ընկերություններում	20,894,923	15,594,923
Այլ ներդրումներ սեփական կապիտալում	42,691	42,691
	20,937,614	**15,637,614**
Ընդհանուր վաճառքի համար մատչելի ակտիվներ տեղական արժույթով	**88,705,765**	**121,204,193**
Ընդհանուր վաճառքի համար մատչելի ակտիվներ	**88,706,682**	**121,205,110**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ արտարժույթով		
Արտերկրյա արժեթղթեր սեփական կառավարման ներքո	95,678,521	25,171,087
	95,678,521	**25,171,087**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ ՀՀ դրամով		
Ձեղչատոկոսային մուրհակ	4,132,916	3,862,867
	4,132,916	**3,862,867**
Ընդհանուր մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	**99,811,437**	**29,033,954**

2008թ-ին ՀՀ Կառավարության կողմից թողարկվել է 85,663,194 հազար դրամ անվանական արժեքով անտոկոս ցպահանջ մուրհակ՝ որպես անհատույց ներդրում Բանկում: Մուրհակը թողարկվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սեփական կապիտալի բացասական պահուստները ծածկելու նպատակով: Նույն օրենքի համաձայն՝ 2009թ. շահույթից մասհանումների հաշվին 23,985,710 հազար դրամ (2008թ.՝ շահույթից՝ 6,033,474 հազար դրամ) գումար ուղղվել է մուրհակի մարմանը:

Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորում է դրա իրական արժեքը:

ՀՀ Կառավարության՝ վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

Տեղական արժույթով վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքները ներկայացված են սկզբնական արժեքով: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս

տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին վկայություն տրամադրել նրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի կիրառման արդյունքում ստացվել են տարբեր իրական արժեքներ, ինչը պայմանավորված է դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության անորոշությամբ:

14. Արժույթի միջազգային հիմնադրամ

ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
ՀՓԻ ԱՄՀ-ում	12,169,283	47,099,672
Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն)	51,493,341	54,502,140
Հաշվեգրված տոկոսներ	7,613	19,512
	63,670,237	**101,621,324**

Բանկն ունի ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվ ԱՄՀ-ում, որն օգտագործվում է ԱՄՀ-ի հետ գործարքներ իրականացնելու նպատակով: Այս ընթացիկ հաշվի համար սահմանված տոկոսադրույքը հաշվարկվում է ՀՓԻ տոկոսադրույքի հիման վրա, որը ստացվում է շաբաթական կտրվածքով՝ որպես ՀՓԻ զամբյուղը կազմող չորս արժույթների դրամային շուկայի՝ եռամսյա ժամկետով գործիքների ընտրված դրույքաչափերի կշռված միջին: 2010թ-ին դրույքաչափը տատանվել է 0.22%-0.32% (2009թ.՝ 0.82%-0.25%):

Համաձայն ԱՄՀ կանոնադրության՝ Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության գանձարանային գործակալ և միաժամանակ գործում է որպես ԱՄՀ պահառու Հայաստանի Հանրապետությունում: Այդպիսով, Բանկը գրառումներ է վարում ԱՄՀ-ում անդամակցության Հայաստանի Հանրապետության բաժնեմասի և ԱՄՀ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը վերաբերող մուրհակի վերաբերյալ:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՀ-ում անդամակցության համար Հայաստանի Հանրապետության բաժնեմասը կազմել է 92,000,000 ՀՓԻ (2009թ.՝ 92,000,000 ՀՓԻ):

Դրամով պարտավորություններ ԱՄՀ հանդեպ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Արժեթղթերի հաշիվ	140,663,079	140,663,079
ԱՄՀ-ի հանդեպ ՀՀ դրամով պարտավորությունների ճշտման հաշիվ	(6,677,555)	8,523,264
Թիվ 1 հաշիվ	61,814,443	23,367,610
Թիվ 2 հաշիվ	2,754	2,630
	195,802,721	**172,556,583**

ԱՄՀ-ի թիվ 1 հաշիվը օգտագործվում է ԱՄՀ-ի հետ գործառնությունների իրականացման համար, ներառած անդամավճարի վճարումը, միջոցների գնումն ու հետգնումը, Stand-by վարկի հաշվառումը, փոխառությունների մարումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի վաճառքը:

ԱՄՀ-ի թիվ 2 հաշիվը օգտագործվում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթով և Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններում ԱՄՀ վարչական ծախսերի և մուտքերի արտացոլման համար:

2010 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 140,6 միլիարդ դրամի (2009թ.՝ 140,6 միլիարդ դրամ) ԱՄՀ-ից ստացված վարկերը երաշխավորված են Կառավարության կողմից՝ այդ վարկերի դիմաց արժեթղթերի թողարկման միջոցով:

ՀՓԻ-ով պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Վարկեր	32,565,060	42,837,498
ՀՓԻ տեղաբաշխում	49,248,152	52,125,764
Հաշվեգրված տոկոսներ	471,297	300,265
	82,284,509	**95,263,527**

ԱՄՀ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված է աղքատության նվազեցման և տնտեսական աճի վարկ՝ ՀՓԻ-ով, 15 տարի ժամկետով, որի տոկոսադրույքը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 0% (2009թ. ՝ 0,5%)

ՀՓԻ տեղաբաշխումը ՀՓԻ-վարչությանը անդամակցող երկրներին ԱՄՀ-ի կողմից առանց որևէ պայմանների ՀՓԻ միջոցների տրամադրումն է, որոնք բաշխվում են երկրների՝ ԱՄՀ-ում ունեցած բաժնեմասերին համամասնորեն: Տեղաբաշխված ՀՓԻ-ն կարող է օգտագործվել բավականին լայն շրջանակների գործառնություններ իրականացնելու համար՝ ներառյալ այլ անդամների արժույթի ձեռքբերումը, ֆինանսական պարտավորությունների կարգավորումը, նվիրատվությունները, վարկերի տրամադրումը և այլն: 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսադրույքը կազմել է 0.32% (2009թ.՝ 0.23%)

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

2010 թվականի դեկտեմբերի 31-ի և 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՀ-ի նկատմամբ պահանջների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը համապատասխանում է իրական արժեքին:

15. Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Վարկեր տեղական բանկերին՝ KFW և Համաշխարհային բանկի հետ համաձայնագրի շրջանակներում	29,643,307	25,619,315
Ստորադաս պայմաններով վարկեր	24,536,382	13,467,606
Այլ վարկեր տեղական բանկերին	7,325,216	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	8,022,812	30,782,396
Այլ վարկեր	1,087,782	865,822
	70,615,499	**70,735,139**

KFW և Համաշխարհային բանկի հետ պայմանագրի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական 14 բանկերի և 2 ֆինանսական կազմակերպությունների, որոնց համար սահմանված է տարեկան միջին 5.5%-8% տոկոսադրույք:

Հաշվի առնելով ՀՀ բանկային համակարգի հուսալիությունը և երկարաժամկետ կայունության ապահովումը՝ համակարգի կողմից հավանական ճգնաժամային ռիսկերի կլանման բավարար կարողություններ ապահովելու նպատակով Բանկի կողմից ստորադասության պայմաններով վարկեր են տրամադրվել առևտրային 8 բանկերի՝ 7.5%-ով, 5 տարի ժամկետով:

Բանկային համակարգում բանկերի միաձուլման նպատակով տրամադրվել է վարկ 3 տարի ժամկետով:

Բանկը հակադարձ հետգնման համաձայնագրերով վերցրել է արժեթղթեր՝ որպես գրավ առևտրային վարկերի համար, որոնք թույլատրվում է վաճառել կամ վերագրավադրել:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր ունեն 5 տեղական բանկեր (2009թ.՝ 14 տեղական բանկեր): Այս պայմանագրերի դիմաց գրավադրված են հետևյալ արժեթղթերը՝ իրական արժեքով:

հազար ՀՀ դրամ

	2010	2009
ՀՀ Կառավարության պետական գանձապետական պարտատոմսեր	8,131,931	30,495,653
	8,131,931	**30,495,653**

16. Հիմնական միջոցներ

հազար ՀՀ դրամ

	Հող և շենքեր	Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ	10,499,985	3,694,409	302,675	1,881,628	16,378,697
Ավելացում	3,996,009	1,440,939	51,589	357,854	5,846,391
Օտարումներ	(19,586)	(115,881)	(41,018)	(228,687)	(405,172)
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,476,408	5,019,467	313,246	2,010,795	21,819,916
Ավելացումներ	9,782,376	968,262	10,268	530,320	11,291,226
Օտարումներ	-	(499,688)	-	(69,904)	(569,592)
Վերադասակարգում	(489,133)	32,935	(6,453)	462,651	-
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.	23,769,651	5,520,976	317,061	2,933,862	32,541,550
Կուտակված մաշվածություն					
2009թ. հունվարի 1-ի դրությամբ	1,724,054	2,659,909	172,173	1,443,845	5,999,981
Ավելացումներ	47,926	234,390	39,516	115,334	437,166
Օտարումներ	-	(114,020)	(38,967)	(227,031)	(380,018)
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,771,980	2,780,279	172,722	1,332,148	6,057,129
Ավելացումներ	116,632	382,426	40,413	191,564	731,035
Օտարումներ	-	(492,938)	-	(65,865)	(558,803)
Վերադասակարգում	-	-	(6,130)	6,130	-
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,888,612	2,669,767	207,005	1,463,977	6,229,361
Զուտ հաշվեկշռային արժեք					
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,775,931	1,034,500	130,502	437,783	10,378,716
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,704,428	2,239,188	140,524	678,647	15,762,787
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,881,039	2,851,209	110,056	1,469,885	26,312,189

17. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր
Սկզբնական արժեք	
2009թ. հունվարի 1-ի դրությամբ	462,200
Ավելացումներ	172,085
Օտարումներ	(1,063)
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	633,222
Ավելացումներ	155,272
Օտարումներ	-
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	788,494
Ամորտիզացիա	
2009թ. հունվարի 1-ի դրությամբ	206,373
Ավելացումներ	-
Օտարումներ	(1,058)
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	205,315
Ավելացումներ	-
Օտարումներ	-
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	205,315
Զուտ հաշվեկշռային արժեք	
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	255,827
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	427,907
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**583,179**

Ոչ նյութական ակտիվները անհատապես գնահատվել են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման առումով և արժեզրկման հայտանիշներ չեն հայտնաբերվել:

18. Այլ ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Դրամագիտական արժեքներ	739,624	735,712
Դեբիտորական պարտքեր	2,836,231	1,538,413
Այլ ակտիվներ	176,406	177,200
	3,752,261	**2,451,325**

19. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Պարտավորություններ արտարժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	88,236,533	148,673,237
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	9,729,221	39,699
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ	1,684,280	1,903,238
	99,650,034	**150,616,174**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	77,124,832	47,978,778
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվ	254,710	7,996
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	3,446,229	1,460,677
Այլ պարտավորություններ	-	3,756,770
	80,825,771	**53,204,221**

Բանկերի ավանդների և մնացորդների կենտրոնացում

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային բանկերի կողմից Բանկում տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարից ոչ մի բանկի մնացորդը չի գերազանցել այդ մնացորդների 10%-ը: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդի 10%-ը գերազանցել է մեկ Բանկի գծով և կազմել է 27,452,156 ՀՀ հազար դրամ:

2009թ. ընթացքում Բանկը ՀՀ բանկերին տրամադրել և միաժամանակ նրանցից ստացել է կարճաժամկետ ավանդներ տարբեր արժույթներով (նշված գումարները ներառված են այլ պարտավորություններ հոդվածում). 31.12.09թ. դրությամբ Բանկը ստացել է ավանդ՝ 3,751,400 հազար դրամ գումարով, ինչի դիմաց ՀՀ նույն բանկին տրամադրած ԱՄՆ դոլարով ավանդը ներառված է 11 ծանոթագրությունում: 2010 թվականին Բանկը կարճաժամկետ ավանդային պայմանագրեր չի ունեցել:

20. Այլ փոխառություններ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Վարկեր KFW և համաշխարհային բանկից	27,560,279	28,266,861
Հաշվեգրված տոկոսներ	39,530	42,536
	27,599,809	**28,309,397**

Բանկին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որի նպատակը հատուկ վարկային ծրագրերի ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով (տե՛ս ծանոթագրություն 15): Վարկերը ենթակա են մարման 2010թ-ից 2048թ. ժամանակաշրջանում: Վարկի օգտագործված մասի տոկոսադրույքը կազմում է տարեկան 0.75%, իսկ չօգտագործված մասինը՝ 0.25%: Վարկերի մարումը KFW-ին երաշխավորվում է ՀՀ Կառավարության կողմից:

Բանկին տրամադրվել են վարկեր Համաշխարհային բանկի կողմից, որի նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով (տե՛ս ծանոթագրություն 15): Վարկերի գծով վճարվում է տարեկան 0.81%, որոնք ենթակա են մարման 2010թ-ից 2035թ. ժամանակաշրջանում:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2009թ.՝ նույնպես):

21. Այլ պարտավորություններ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Աշխատակիցների ցպահանջ ավանդներ	531,068	428,266
Այլ պարտավորություններ	822,826	425,036
	1,353,894	**853,302**

22. Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Պարտավորություններ արտարժույթով		
ՀՀ Կառավարության հաշիվներ	1,187,537	1,225,249
Կրեդիտորական պարտքեր	2,801,575	103,939
	3,989,112	**1,329,188**
Պարտավորություններ տեղական արժույթով		
ՀՀ Կառավարության հաշիվներ	27,315,188	46,143,142
Ավանդներ	79,230,385	131,051,654
	106,545,573	**177,194,796**

Հանդես գալով որպես ՀՀ Կառավարության ֆինանսական գործակալ և ղեկավարվելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ կենտրոնական բանկի միջև 13.10.2006թ. ստորագրված համաձայնագրի շրջանակներում որդեգրած համագործակցության սկզբունքներով՝ ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է ՀՀ Կառավարության ազատ միջոցների ներգրավում: Ելնելով շուկայի վրա կողմերի գործառնությունների ազդեցության կարևորությունից՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, հիմք ընդունելով համագործակցության սկզբունքները, ՀՀ Կառավարության միջոցները պետք է տեղաբաշխի շուկայական կանոնների պահպանման սկզբունքների ներքո, իսկ ՀՀ կենտրոնական բանկը պետք է մատուցի գնով և որակով շուկային համապատասխան ծառայություններ: Կողմերի գործողությունները չեն կարող լինել մասնավոր հատվածի հաշվին և հանգեցնել շուկայական մեխանիզմների ոչ արդյունավետ գործունեությանը:

23. Սեփական կապիտալ

Թողարկված կապիտալ

Բանկի թողարկված կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավադրվել, վաճառվել կամ օտարվել:

Լրացուցիչ կանոնադրական կապիտալ

Լրացուցիչ կանոնադրական կապիտալը ՀՀ Կառավարության կողմից կատարված ներդրում է մուրհակի տեսքով (տե՛ս ծանոթագրություն 13):

Գլխավոր պահուստ

Գլխավոր պահուստը ձևավորվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման:

24. Պայմանական պարտավորություններ

Կապիտալ բնույթի պարտավորվածություններ

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալ ներդրումների գծով պարտավորությունները, որոնք վերաբերում են Բանկի շենքերի կապիտալ շինարարությանը, կազմում են 14,541,725 հազար ՀՀ դրամ (2009թ.՝ 4,543,029 հազար ՀՀ դրամ):

Իրավական պարտավորություններ

Բանկի ղեկավարությանը հայտնի չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցի մասին:

Երաշխիքներ

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից տրամադրված երաշխիքները՝ 658,000 հազար դրամ գումարով, տրվել էին 1994թ-ից 1995թ. ընկած ժամանակաշրջանում՝ շինարարական ընկերությունների անունից՝ երկրաշարժի գոտու վերակառուցման նպատակով: Երաշխիքներն իրենցից ներկայացնում են չեղյալ չհամարվող հաստատումներ առ այն, որ Բանկը կկատարի վճարումներն այն դեպքում, երբ հաճախորդն ի վիճակի չի լինի կատարել իր պարտականությունները երրորդ կողմերի հանդեպ և կենթարկվի վարկային ռիսկի:

25. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը (տե՛ս ծանոթագրություն 10):

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Ղեկավար անձնակազմը, ներառյալ Բանկի խորհրդի անդամները	209,580	196,427

Ստորև ներկայացված են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

հազար ՀՀ դրամ

	2010	Միջին արդյունավետ տոկոսադրույք	2009	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Հաշվապահական հաշվեկշիռ				
Ակտիվներ				
Վարկեր	65,640	3-5%	76,776	3-5%
Ավանդներ	59,725	14%	42,858	13.5%
Դեբիտորներ գործուղումների գծով	-	-	2,956	0.00%
Պարտավորություններ աշխատավարձի գծով	-	-	2,102	0.00%

Ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային ծախս	6,142	2,042
Տոկոսային եկամուտ	3,294	2,900

Գործարքներ դուստր ընկերությունների հետ

Դուստր ընկերությունների հետ գործարքների համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Այլ ծախսեր		
Ինկասացիայի ծախսեր	556,708	601,552

Գործարքներ ՀՀ Կառավարության հետ

Ստորև ներկայացված են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կառավարության հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

հազար ՀՀ դրամ

	2010	Միջին արդյունավետ տոկոսադրույք	2009	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Հաշվապահական հաշվեկշիռ				
Ակտիվներ				
ՀՀ Կառավարության պետական գանձապետական արժեթղթեր (ծանոթ. 13)	12,124,141	11%	25,936,859	8.6%
ՀՀ Կառավարության մուրհակ (ծանոթ. 13)	55,644,010	0.00%	79,629,720	0.00%
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ տեղական արժույթով (ծանոթ. 22)	106,545,573	10%	177,194,796	9%
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ արտարժույթով (ծանոթ . 22)	3,989,112	0.00%	1,329,188	0.00%

ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորություններում տեղական արժույթով ներառված ավանդների շարժը.

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	131,051,654	-
Ավելացում	688,363,583	471,312,429
Օտարում	(740,184,852)	(340,260,775)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	79,230,385	131,051,654

ՀՀ Կառավարության հետ գործարքների համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ ՀՀ Կառավարության պետական գանձապետական արժեթղթերի գծով	2,305,423	2,011,754
Զուտ օգուտ/(վնաս) սփոթ գործարքներից	782,980	(499,005)
ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունների գծով վճարված տոկոսներ	13,487,074	11,085,891

26. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում տարեվերջի դրությամբ արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

հազար ՀՀ դրամ

	2010	2009
Դրամական միջոցներ	7,552,047	7,776,292
Նոստրո հաշիվներ (ծանոթ. 11)	119,776,198	181,157,023
ՀՓԻ ԱՄՀ-ում (ծանոթ. 14)	12,169,283	47,099,672
	139,497,528	**236,032,987**

27. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկի գնահատմամբ՝ իր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները, բացառությամբ սեփական կապիտալի չգնանշված գործիքների իրական արժեքի, էականորեն չեն տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքներից: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, բացառությամբ սեփական կապիտալի չգնանշված արժեթղթերում պահվող վաճառքի համար մատչելի ակտիվների, հաշվարկվում են՝ կիրառելով զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկական դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի հանդեպ կիրառելի զեղչման դրույքը:

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 13-ում, 20,937,614 հազար դրամ (2009թ.՝ 15,637,614 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով սեփական կապիտալի չգնանշված արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէր որոշել:

2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սեփական կառավարման ներքո գտնվող մինչև մարման ժամկետը արտերկրյա արժեթղթերը իրենցից ներկայացնում են այլ պետությունների պետական արժեթղթեր՝ 95,678,521 հազ. ՀՀ դրամ գումարով (2009թ.՝ 25,171,087 հազ. ՀՀ դրամ), որոնք գնանշվող են, և դրանց իրական արժեքը 31.12.10թ. դրությամբ կազմում է 95,671,630 հազ. ՀՀ դրամ (2009թ.՝ 25,171,160 հազ. ՀՀ դրամ):

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության գործարքի» ժամանակ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները՝ իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի՝ ակտիվների անմիջական վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Իրական արժեքի աստիճանակարգում (հիերարխիա)

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ իրական արժեքով չափված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն ներկայացված իրական արժեքի աստիճանակարգման: Այս աստիճանակարգումը բաժանում է ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի աստիճանակարգումն ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են թե՛ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

հազար ՀՀ դրամ

	2010			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Գնանշվող արժեթղթեր և պարտատոմսեր	404,571,378	-	-	404,571,378
Չգնանշվող արժեթղթեր և պարտատոմսեր	-	12,124,141	-	12,124,141
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	61,539	-	-	61,539
Ընդամենը	404,632,917	12,124,141	-	416,757,058
Ֆինանսական պարտավորություններ				
Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ	19,478	-	-	19,478
Ընդամենը	19,478	-	-	19,478
Զուտ իրական արժեք	**404,613,439**	**12,124,141**	**-**	**416,737,580**

հազար ՀՀ դրամ

	2009			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Գնանշվող արժեթղթեր և պարտատոմսեր	459,160,036	-	-	459,160,036
Չգնանշվող արժեթղթեր և պարտատոմսեր	-	25,936,860	-	25,936,860
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	74,639	-	-	74,639
Ընդամենը	459,234,675	25,936,860	-	485,171,535
Ֆինանսական պարտավորություններ				
Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ	36,588	-	-	36,588
Ընդամենը	36,588	-	-	36,588
Զուտ իրական արժեք	**459,198,087**	**25,936,860**	**-**	**485,134,947**

28. Ռիսկերի կառավարում

Ինստիտուցիոնալ հիմքերը

ՀՀ համախառն միջազգային պահուստները ոչ ռեզիդենտների նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի պահանջներն են՝ արտահայտված միայն ազատ փոխարկելի արտարժույթով: Պահուստներն արտացոլվում են ՀՀ կենտրոնական բանկի հաշվեկշռում: Կենտրոնական բանկը պահուստների կառավարումն իրականացնում է

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվող գործիքներում:

Պահուստները նախատեսված են արտաքին վճարումների/առևտրի անհավասարակշռությունները ուղղակի ֆինանսավորելու, փոխարժեքի վրա այդ անհավասարակշռությունների ազդեցությունը անուղղակի կարգավորելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումն ապահովելու համար: Կենտրոնական բանկը պահուստները օգտագործում է ՀՀ Կառավարության և պետական գործակալությունների արտարժութային սպասարկման համար, օրինակ՝ արտարժույթի փոխարկման կամ արտաքին պարտքի գծով վճարումների համար:

2007 թվականից ՀՀ կենտրոնական բանկը, որդեգրելով առաջնակարգ կենտրոնական բանկերի լավագույն փորձը, սահմանել է միջազգային պահուստների կառավարման նոր սկզբունքներ: Նախ և առաջ, տարանջատվել են ռազմավարական և մարտավարական որոշումների ընդունման գործառույթները, սահմանվել է դրանց ընդունման պատասխանատվության բաշխումը ՀՀ ԿԲ խորհրդի, Ներդրումային հանձնաժողովի և պահուստների կառավարումն իրականացնող դիլերների մակարդակներում (Ֆինանսական վարչության Արտաքին շուկաներում գործառնությունների բաժին): Այլ կերպ ասած՝ ներդրվել է որոշումների կայացման եռամակարդակ համակարգ, ըստ որի՝ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից սահմանվում է «Ակտիվների ռազմավարական տեղաբաշխումը», այսինքն՝ պահուստների կառավարման հիմնական սկզբունքները երկարաժամկետ՝ 3 տարի միջակայքի համար: Այդ սկզբունքների ներքո ավելի կարճաժամկետ, մարտավարական ուղենիշերի ընտրության իրավասությունը պատվիրակվել է ՀՀ ԿԲ ներդրումային հանձնաժողովին: Պայուսակի կառավարիչները, իրենց հերթին, ունեն մարտավարական ուղենիշերի և թույլատրելի ակտիվ ռիսկի սահմաններում ընթացիկ կառավարման որոշումներ կայացնելու իրավասություններ:

Կառավարումն ու վերահսկողությունը

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքի՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման համար պատասխանատու է Ֆինանսական վարչությունը: Ֆինանսական վարչության բաժիններից մեկը՝ Արտաքին շուկաներում գործառնությունների բաժինը, իրականացնում է պահուստների ամենօրյա կառավարման հետ կապված գործառնությունները: Նույն վարչության Միջազգային ռիսկերի կառավարման բաժինը պատասխանատու է ռիսկերի գնահատման, ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և ուղենիշերի մշակման, սահմանաչափերի պահպանման մոնիթորինգի, ինչպես նաև պահուստների կառավարման կատարողականի գնահատման համար:

Պահուստների կառավարման հետ կապված խնդիրներն ամսական պարբերականությամբ քննարկվում են ՀՀ կենտրոնական բանկի Ներդրումային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված են կառավարման գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ՀՀ ԿԲ նախագահը և նախագահի

տեղակալը: Հանձնաժողովը նախկինում բացառապես խորհրդատվական մարմին էր, սակայն կառավարման եռամակարդակ համակարգի ներդրումից հետո վերջինիս շնորհվել է որոշումներ կայացնելու իրավասություն: Պահուստների կառավարման կատարողականի վերաբերյալ Ֆինանսական վարչությունը եռամսյակային պարբերականությամբ զեկուցում է Ներդրումային հանձնաժողովին և կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին: Կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ Կառավարությանը և Ազգային ժողովին է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

Պահուստների կառավարման գործընթացի կանոնակարգվածությունը վերահսկվում է ԿԲ վերստուգիչ խմբի կողմից, որը զեկուցում է խորհրդին:

Ակտիվների տեղաբաշխումը և ռիսկերի կառավարումը

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ միջազգային պահուստները կառավարվում են առաջին հերթին իրացվելիության և անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման պայմաններում եկամտաբերության մաքսիմալացման սկզբունքով: Այս նպատակով ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական վարչությունը մշակում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և մարտավարական ուղենիշերի նախագծերը, որոնք հաստատվում են համապատասխանաբար ՀՀ ԿԲ խորհրդի և Ներդրումային հանձնաժողովի կողմից: Ներդրումային ուղենիշերը ներառում են ներդրումային գործընթացը կարգավորող բոլոր սահմանաչափերը և պահանջները, ինչպես նաև ակտիվների այն կառուցվածքը, որը համապատասխանում է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից պահուստների կառավարմանը ներկայացվող սկզբունքներին:

Վարկային ռիսկ

ՀՀ միջազգային պահուստների կառավարման ընթացքում ՀՀ կենտրոնական բանկն առնչվում է նաև վարկային ռիսկի հետ, որը կարելի է սահմանել որպես գործընկերոջ կամ արժեթուղթ թողարկողի կողմից պարտավորությունների չկատարման հետ կապված ռիսկ: Միջազգային շուկաներում գործընկերների վարկային որակը գնահատելու համար ՀՀ կենտրոնական բանկը օգտագործում է միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպությունների կողմից ֆինանսական կազմակերպություններին շնորհված վարկանիշները:

ՀՀ կենտրոնական բանկը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշներ պետական, պետական գործակալությունների, այլ պաշտոնական մարմինների և վերազգային կազմակերպությունների արժեթղթերի թողարկողների կամ թողարկումների համար, որոնց երկարաժամկետ վարկանիշը չի կարող ցածր լինել AA- (S&P)/Aa3 (Moody's), իսկ կարճաժամկետ վարկանիշը՝ A1+(S&P)/P1(Moody's) մակարդակներից:

Ֆինանսական ներդրումների վարկային որակի մոնիթորինգի համար կիրառվում է ներքին ռեսուրսներով մշակված մոդելը: Վերջինս գործընկերոջ բաժնետոմսերի գների վարքագծի, ինչպես նաև մի շարք հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա հնարավորություն է

տալիս գնահատելու ընկերության անվճարունակության հավանականությունը՝ ըստ շուկայի մասնակիցների: Այն պատկանում է կառուցվածքային մոդելների տիպին, որն ընկերության անվճարունակությանը տալիս է տնտեսագիտորեն իմաստալից բացատրություն՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի, ինչպես նաև պարտքի չափի վրա: Մոդելը հիմնված է սահմանային օպցիոնի (barrier option) գնի հաշվարկման բանաձևի վրա, որը նաև հեղինակավոր FITCH վարկանշային կազմակերպության կողմից ընկերություններին շնորհվող implied rating-ի բաղադրիչներից մեկն է: Վարկանիշների և կիրառվող մոդելի արդյունքների հիման վրա կառուցվում է ըստ վարկանիշների և ժամկետայնությունների, առանձին գործընկերների և գործիքների գծով ներդրումների առավելագույն ծավալների սահմանաչափերի մատրիցը, որը և վարկային ռիսկի կառավարման հիմնական գործիքն է:

Վարկային ռիսկի առավելագույն չափը՝ առանց երաշխիքի կամ այլ վարկային ապահովման

Աղյուսակում ներկայացված է 2010 և 2009 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ վարկային ռիսկի ենթարկվելու վատագույն տարբերակը՝ առանց ապահովվածությունը հաշվի առնելու: Հաշվեկշռային ակտիվների համար վարկային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային զուտ արժեքների վրա:

հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	Համախառն առավելագույն ռիսկի չափ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Համախառն առավելագույն ռիսկի չափ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	11	158,102,101	221,678,070
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	12	404,632,917	459,234,675
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	15	70,615,499	70,735,139
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	13	88,706,682	121,205,110
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	13	99,811,437	29,033,954
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	14	63,670,237	101,621,324
Ընդամենը վարկային ռիսկ		885,538,873	1,003,508,272

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, վերևում ներկայացված գումարները ցույց են տալիս ընթացիկ ռիսկը, բայց ոչ առավելագույնը, որը կարող է առաջանալ ապագայում իրական արժեքների փոփոխություններից:

Իրացվելիության ռիսկ

ՀՀ կենտրոնական բանկը, որպես Կառավարության բանկային գործակալ և երկրի գլխավոր դրամավարկային մարմին, պատասխանատու է պետական պարտքի սպասարկման, Կառավարության արտաքին վճարումների սպասարկման, ինչպես նաև ներքին շուկայում ազգային արժույթի կտրուկ տատանումների հարթեցման համար: Այս տեսանկյունից, կարևորվում է իրացվելիության ծավալների ճիշտ կանխատեսումն ու կառավարումը:

Հաշվի առնելով պահուստների կառավարման նպատակները և խմբավորելով իրացվելիության պահանջ առաջացնող գործոններն ըստ հրատապության՝ ՀՀ միջազգային պահուստները բաժանվել են 3 մասի՝ գործառնական, իրացվելի և ներդրումային պայուսակների: Եթե առաջին երկուսը նախատեսվում են կարճաժամկետ/պահային և միջնաժամկետ իրացվելիության ապահովման համար, ապա վերջինի նպատակը հարստության կուտակումն է:

Տրանշների նպատակները պայմանավորում են նաև դրանց կառավարման քաղաքականությունը՝ ուղենիշերի ընտրությունը, կառավարման պասիվ կամ ակտիվ տարբերակի ընտրությունը:

Ստորև ներկայացվում է 2010 և 2009թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն:

հազար ՀՀ դրամ

	2010						
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	-	-	-	-	-	348,164,734	348,164,734
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	180,489,100	-	-	-	-	-	180,489,100
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	83,771,724	27,156,571	-				110,928,295
ԱՄՀ	120,364,074	-	8,523,491	148,181,976	1,487,336	-	278,556,877
Այլ փոխառություններ	-	-	238,146	1,585,982	30,393,480	-	32,217,608
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**384,624,898**	**27,156,571**	**8,761,637**	**149,767,958**	**31,880,816**	**348,164,734**	**950,356,614**

հազար ՀՀ դրամ

	2009						
	Պահանջը կամ մեկ ամսից քիչ	1 - 3 ամիս	3 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Անժամկետ	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	-	-	-	-		320,669,631	320,669,631
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	198,160,386	3,793,770	1,908,238	-	-	-	203,862,394
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	72,568,670	-	110,955,766	-	-	-	183,524,436
ԱՄՀ	106,651,903	-	8,846,564	149,538,921	3,411,701	-	268,449,089
Այլ փոխառություններ	-	-	236,077	1,811,255	31,219,870	-	33,267,202
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**377,380,959**	**3,793,770**	**121,946,645**	**151,350,176**	**34,631,571**	**320,669,631**	**1,009,772,752**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը սահմանվում է որպես ակտիվների պայուսակի արժեքի հնարավոր կորուստ՝ փոխարժեքների և տոկոսադրույքների անբարենպաստ տատանումների հետևանքով:

Պահուստների արժութային բաղադրությունը սահմանվում է ըստ իրացվելիության տրանշների՝ յուրաքանչյուր տրանշի ձևավորման հիմքում ընկած գործոնների հեջավորման սկզբունքով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ միջազգային պահուստներ ունենալու շարժառիթների շարքում ամենամեծ դերն ունի ՀՀ արտաքին պետական պարտքը, որը և հանդիսանում է արտարժույթի նկատմամբ պահանջարկը պայմանավորող հիմնական գործոնը, միջազգային պահուստների հիմնական մասի արժութակազմը սահմանված է ՀՀ արտաքին պարտքի նմանակման սկզբունքով: Կարճաժամկետ արտարժութային իրացվելիության ապահովման համար նախատեսված միջոցների արժութակազմը որոշելիս հաշվի են առնվում արտաքին առևտրից առաջացող հոսքերը, ինչպես նաև ներքին արժութային շուկայում հնարավոր միջամտության և ընթացիկ վճարումների համար անհրաժեշտ միջոցները: Արժութային բաղադրությունը վերանայվում է առնվազն կիսամյակային պարբերականությամբ:

Ինչ վերաբերում է տոկոսադրույքի ռիսկին, եռամակարդակ կառավարման ներքո ՀՀ ԿԲ խորհուրդը սահմանում է այսպես կոչված՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը», որը նախանշում է երկարաժամկետում միջազգային պահուստների կառավարման ընթացքում տոկոսադրույքի ռիսկի ընդունելի սահմանները և այդ սահմաններում օպտիմալ եկամտաբերություն ապահովող ակտիվների տեղաբաշխման ընտրության տրամաբանու-

թյունը: ՀՀ ԿԲ խորհրդի՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը» արտահայտվում է որոշակի ժամանակահատվածում (ներկայումս 3 տարի) և որոշակի հավանականությամբ (95%) ակնկալվող եկամտաբերության նվազագույն մակարդակի տեսքով: Նշված տրամաբանությունից ելնելով՝ ակտիվների օպտիմալ տեղաբաշխման՝ մարտավարական ուղենիշերի ընդունման իրավասությունը պատվիրակվել է Ներդրումային հանձնաժողովին:

Ուղենիշերի սահմանման հիմնական նպատակը եկամտաբերության մաքսիմալացումն է ավելի կարճ (մեկ տարի) ժամանակահատվածում: Այդ որոշումների հիմքում, ի տարբերություն ռազմավարականների, դրվում են շուկայի ընթացիկ միտումները և կանխատեսումները: Վերջիններիս ապահովման համար կատարելագործվել են նաև մոդելավորման մեթոդները: Օպտիմալ պայուսակի ընտրության նպատակով եկամտաբերության և ռիսկայնության գնահատումն իրականացվում է ապագա հնարավոր սցենարների մշակման միջոցով: Մասնավորապես դա ներառում է վեկտոր ավտոռեգրեսիոն բազմաչափ ընդհանրացված ավտոռեգրեսիվ պայմանական տարացրիվ (հետերոսկեդաստիկ) (VAR-MGARCH) մոդելի միջոցով ստացված եկամտաբերության կորի սիմուլյացիաների արդյունքները, ինչպես նաև սեփական և շուկայի այլ մասնակիցների փորձագիտական կանխատեսումները տոկոսադրույքների և վարկային սփրեդների վերաբերյալ: Օպտիմալ պայուսակի ընտրությունը կատարվում է Մարկովիցի մոդելի միջոցով, սակայն որոշակի սահմանափակումների պայմաններում:

Ինչ վերաբերում է ռիսկի մոնիթորինգին, ապա շուկայական ռիսկի ընթացիկ վերահսկման և պահուստների կառավարման արդյունավետությունը գնահատելու նպատակով ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից հաշվարկվում են միջազգային պրակտիկայում ընդունված մի շարք այլ ցուցանիշներ (Առանցքային կետի դյուրացիա, Ինֆորմացիոն գործակից, Սփրեդ դյուրացիա, PCA դյուրացիա, tracking error և այլն):

Ստորև ներկայացվում են այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի՝ ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխման հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

հազար ՀՀ դրամ

Արտար-ժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում *տոկոս*	2010		2009	
		Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	+20%	53,997,794	53,977,794	69,619,854	69,619,854
ԱՄՆ դոլար	-20%	(53,997,794)	(53,977,794)	(69,619,854)	(69,619,854)

Ստորև ներկայացվում է Բանկի կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները 31.12.10թ. դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

հազար ՀՀ դրամ

Արտար-ժույթ	Փոփոխություններ բազիսային կետով	2010		2009	
		Մինչև 1 տարի	1 տարուց ավելի	Մինչև 1 տարի	1 տարուց ավելի
ԱՄՆ դոլար	+20%	(959)	(141,668)	(7,385)	(167,873)
ԱՄՆ դոլար	-20%	729	136,647	5,120	171,489

Ստորև ներկայացվում է Բանկի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ վերագնահատելով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում 31.12.10թ. դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

հազար ՀՀ դրամ

Արժույթ	Փոփոխություններ բազիսային կետով	2010	2009
		Ազդեցությունը շահույթի վրա	Ազդեցությունը շահույթի վրա
Արտարժույթ	+25	(914,599)	(893,533)
Արտարժույթ	-25	914,599	893,553

29. Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև ներկայացված են 2010թ. և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տոկոսակիր ակտիվներն ու պարտավորությունները և վերջիններիս համապատասխան՝ միջին արդյունավետ տոկոսադրույքներն այդ ամսաթվի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

հազար ՀՀ դրամ

	2010		2009	
	Արժեք	Միջին արդյունավետ տոկոսադրույք	Արժեք	Միջին արդյունավետ տոկոսադրույք
ՏՈԿՈՍԱԿԻՐ ԱԿՏԻՎՆԵՐ				
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ				
Նոստրո հաշիվներ				
- ԱՄՆ դոլար	90,353,330	0.16%	143,848,833	0.08%
- եվրո	28,253,122	0.36%	36,195,576	0.56%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	1,053,146	0.00%	1,249,523	0.11%
- այլ արժույթներ	210,537	0.00%	127,318	0.00%
Ավանդներ և այլ մնացորդներ օտարերկրյա բանկերում				
- ԱՄՆ դոլար	32,739,803	4.14%	34,062,534	7.3%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	4,677,966	0.69%	-	-
Այլ հաշիվներ				
- ԱՄՆ դոլար	499,399	0.00%	5,921,977	4.95%
- եվրո	314,798	0.00%	272,309	0.00%
	158,102,101		**221,678,070**	
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում				
Արտերկրյա կառավարությունների արժեթղթեր սեփական կառավարման ներքո				
- ԱՄՆ դոլար	179,843,535	1.30%	241,852,660	1.6%
- եվրո	178,617,270	1.90%	173,548,932	2.5%
Արժեթղթեր հավատարմագրային կառավարման ներքո				
- ԱՄՆ դոլար	42,465,054	1.20%	43,758,444	2.5%
Պայմանագրեր սեփական կառավարման ներքո				
- ԱՄՆ դոլար	45,335	0.00%	22,589	0.00%
- եվրո	16,204	0.00%	52,050	0.00%
Փողի շուկայի գործիքներ				
- ԱՄՆ դոլար	3,645,519	0.27%	-	-
	404,632,917		**459,234,675**	

Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր				
- ՀՀ դրամ	70,615,499	7.84%	70,735,139	7.7%
Վաճառքի համար մատչելի ակտիվներ				
- ՀՀ դրամ	55,644,010	0.00%	79,629,720	0.00%
- ՀՀ դրամ	12,124,141	11.00%	25,936,859	8.6%
- ՀՀ դրամ (ներդրումներ սեփական կապիտալում)	20,937,614	0.00%	15,637,614	0.00%
- եվրո (ներդրումներ սեփական կապիտալում)	917	0.0%	917	0.0%
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ				
-ՀՀ դրամ	4,132,916	6.47%	3,862,867	5.8%
-անգլիական ֆունտ ստեռլինգ	19,083,251	0.44%	25,171,087	0.40%
-ճապոնական իեն	76,595,270	0.12%	-	-
	188,518,119		150,239,064	
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ				
- ՀՓԻ	63,670,237	0.29%	101,621,324	0.37%
ՏՈԿՈՍԱԿԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ				
Լորո հաշիվներ տեղական բանկերում				
- ՀՀ դրամ	57,515,911	0.00%	40,449,703	0.00%
- այլ արժույթներ	88,236,533	0.00%	148,673,237	0.00%
Այլ ժամկետային ավանդներ				
- եվրո	1,684,280	1.13%	1,903,238	1.3%
- ՀՀ դրամ	254,710	0.00%	7,995	-
Այլ հաշիվներ				
- ՀՀ դրամ	23,055,151	4.25%	8,989,753	0.00%
- այլ արժույթներ	9,729,220	0.00%	39,699	0.00%
- ՀՀ դրամ	-	-	3,756,770	4.75%
	180,475,805		203,820,395	
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ				
- ՀՀ դրամ	106,545,573	10.00%	177,194,796	9.00%
- ԱՄՆ դոլար	3,989,112	0.00%	1,329,188	0.00%
	110,534,685		178,523,984	
Պարտավորություններ ԱՄՀ հանդեպ				
- ՀՓԻ	82,284,509	0.00%	95,263,527	0.50%
- ՀՀ դրամ	195,802,721	0.00%	172,556,583	0.00%
	278,087,230		267,820,110	
Այլ փոխառություններ				
- եվրո	27,599,809	0.78%	28,309,397	0.60%
Այլ պարտավորություններ				
Ցպահանջ ավանդներ				
- ՀՀ դրամ	531,068	14%	428,266	13.5%
Այլ պարտավորություններ				
- ՀՀ դրամ	822,826	0.00%	425,036	0.00%
- այլ արժույթներ	146,096	0.00%	206,504	0.00%
	1,499,990		1,059,806	

30. Ժամկետայնության վերլուծություն

Աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը առ 31 դեկտեմբերի 2010թ.: Քանի որ Բանկի ֆինանսական գործիքների մեծ մասն ունի հաստատագրված դրույքներ, պայմանագրային մարման ժամկետները ներկայացնում են նաև պայմանագրային տոկոսադրույքի վերանայման ամսաթվերը:

հազար ՀՀ դրամ

	2010						
	Մինչև 1 ամիս	**1-ից 3 ամիս**	**3 ամսից 1 տարի**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Անժամկետ**	**Ընդամենը**
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	7,552,047	-	-	-	-	-	7,552,047
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	119,902,034	32,748,474	5,451,593	-	-	-	158,102,101
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	-	25,870,081	206,465,046	171,383,803	913,987	-	404,632,917
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	6,704,810	3,201,300	2,179,257	56,109,584	2,420,548	-	70,615,499
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	-	-	56,636,853	1,533,497	9,597,802	20,938,530	88,706,682
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	-	53,178,981	43,321,077	3,311,379	-	-	99,811,437
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	12,176,896	-	-	-	51,493,341	-	63,670,237
Այլ ակտիվներ	4,626,753	-	-	-	-	-	4,626,753
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**150,962,540**	**114,998,836**	**314,053,826**	**232,338,263**	**64,425,678**	**20,938,530**	**897,717,673**
Պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	-	-	-	-	-	348,164,734	348,164,734
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	180,475,805	-	-	-	-	-	180,475,805
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	-	19,478	-	-	-	-	19,478
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	56,421,717	54,112,968	-	-	-	-	110,534,685
ԱՄՀ	120,364,074	-	8,523,491	147,798,146	1,401,519	-	278,087,230
Այլ փոխառություններ	-	-	153,187	1,512,203	25,934,419	-	27,599,809
Այլ պարտավորություններ	1,499,990	-	-	-	-	-	1,499,990
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**358,761,586**	**54,132,446**	**8,676,678**	**149,310,349**	**27,335,938**	**348,164,734**	**946,381,731**
Զուտ դիրքը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(207,799,046)**	**60,866,390**	**305,377,148**	**83,027,914**	**37,089,740**	**(327,226,204)**	**(48,664,058)**
Զուտ դիրքը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(105,472,474)**	**57,931,511**	**135,008,730**	**188,812,602**	**42,913,665**	**(305,031,100)**	**14,162,934**

31. Արժութային զամբյուղ

Աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների՝ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Անգլիական ֆունտ ստեռլինգ
Ակտիվներ				
Դրամական միջոցներ	-	7,504,401	47,562	15
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	-	123,592,532	28,567,920	5,731,112
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	-	225,999,443	178,633,474	-
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	70,615,499	-	-	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	88,705,765	-	917	-
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	4,132,916	-	-	19,083,251
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	-	-	-	-
Հիմնական միջոցներ	26,312,189	-	-	-
Ոչ նյութական ակտիվներ	583,179	-	-	-
Այլ ակտիվներ	3,752,261	18	874,474	-
Ընդամենը ակտիվներ	**194,101,809**	**357,096,394**	**208,124,347**	**24,814,378**
Պարտավորություններ				
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	348,164,734	-	-	-
Բանկեր և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	80,825,771	74,409,429	25,240,577	26
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	-	19,478	-	-
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	106,545,573	1,533,121	2,455,991	-
ԱՄՀ	195,802,721	-	-	-
Այլ փոխառություններ	-	10,989,520	16,610,289	-
Այլ պարտավորություններ	1,353,894	143,076	2,983	-
Ընդամենը պարտավորություններ	**732,692,693**	**87,094,624**	**44,309,840**	**26**
Զուտ դիրքը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(538,590,884)**	**270,001,770**	**163,814,507**	**24,814,352**
Զուտ դիրքը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(510,034,315)**	**344,311,158**	**159,392,138**	**26,420,598**

հազար ՀՀ դրամ

Ընդամենը	Այլ արժույթներ	ՌԴ ռուբլի	ՀՓԻ	Ճապոնական իեն
7,552,047	69	-	-	-
158,102,101	121,053	58,346	-	31.138
404,632,917	-	-	-	-
70,615,499	-	-	-	-
88,706,682	-	-	-	-
99,811,437	-	-	-	76,595,270
63,670,237	-	-	63,670,237	-
26,312,189	-	-		-
583,179	-	-		-
4,626,753	-	-		-
924,613,041	**121,122**	**58,346**	**63,670,237**	**76,626,408**
348,164,734	-	-	-	-
180,475,805	-	2	-	-
19,478	-	-	-	-
110,534,685	-	-	-	-
278,087,230	-	-	82,284,509	-
27,599,809	-	-	-	-
1,499,990	-	37	-	-
946,381,731	**-**	**39**	**82,284,509**	**-**
(21,768,690)	**121,122**	**58,307**	**(18,614,272)**	**76,626,408**
30,353,628	**3,871,035**	**32,728**	**6,357,797**	**2,489**